

Պատրիարք  
աշխարհական  
ուժություն

Գիրքը տպագրվում է  
Անահիտ և Հերոս Քաջբերումիների  
Մեկնատությամբ



Պարսկաց պատվային

ընդունելի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

## ՊԱՐՍԻՑ ՊՈԵԶԻԱՅԻ ԸՆՏՐԱՆԻ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Պարսկերնմից տողացի թարգմանեց,  
առաջարանը գրեց և ծանոթագրեց  
ԱՐՄԱՆՈՒԹ ԿՈԶՄՈԹԱՆԸ

ԵՐԵՎԱՆ - 2004



ՏՊԱԳՐՎՈՒՄ Է

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՑՈՒԹԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐՈՒ ՈՐՈՇՄԱՍԻ

Պ 354 Պարսից պոեզիայի ընտրամի. Եր.: «Մուղմի», 2004, 128 էջ:

Այս ընտրամիում ընթերցողը կգտնի պարսից միջնադարյան միստիկ բանաստեղծների նոր թարգմանություններ:

Միստիցիզմը որպես գերգայական եղևույթ իր առենձվածային էությամբ մշտապես եղել է մարդկության հետաքրքրությունների ոլորտում: Այստեղ պարզաբանվում են իւլամական միստիցիզմի (սուֆիզմ) իմացարաբության, գեղագիտության և ծիսականության այն առանձնահատկությունները, որոնք ձևավորել են բանաստեղծների արվեստը:

Թարգմանական նյութի ընտրությունը և հետազոտության հարցադրումները կայացել են Ա. Կոզմովյանի դասախոսությունների արդյունքում:

Գիրքը հասցեագրված է ինչպես միջնադարագետ արևելագետներին, հայագետներին և մշակութարաններին, այնպես էլ ընթերցող լայն շրջաններին:

Այս գրքի ոչ մի հատված չի կարող վերաբրատարակվել առանց հրատարակչության գրավոր թույլտվության:

- © Ա. Կապուտիկյան
- © Ա. Կոզմովյան
- © ՄՈՒՂՆԻ ՀՐԱՑԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



ՊԱՐՍԻՑ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՊՈԵԶԻԱՆ ՍՈՒՖԻԶՄԻ  
ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԵՎ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
(ՌՈՒՄԻ, ՀԱՖԵԶ)

Ես եմ, դու ես, ես ու դու,  
Գիշերում այս դյութական,  
*Մեճը* մենակ ենք, - ես ու դու,  
Ես էլ դու եմ՝ ես չկամ...

Վ. Տերյան

Կան անուններ, որոնք ընդդիմանում են արժևորող բառերին, անուններ, որոնց կողքին դրված յուրաքանչյուր մակրիր գունազրկում է այն՝ արտահայտելով երևոյթի միայն մեկ երանգը, միայն մեկ նիստը։ Այդ է պատճառը, որ ապավիմելով պարսից հայտնի ասացվածքին, թե՛ «Ուկու հարգը ուսկերիչը գիտի», միջնադարյան պոեզիայի այս ընտրանին ներկայացնում ենք առանց ավելորդ գնահատականների՝ բավարարվելով թարգմանչի արդեն ամեն ինչ ասող անվամբ՝

Սիլվա Կապուտիկյան։

### ՃՇՋՅ

Մեն անգամ նոր թարգմանություն ներկայացնելիս, կանգնում ենք նույն հարցի առջև։ Բնարավո՞ր է արդյոք այլ մշակութային աշխարհի արժեքների համակարգի, գեղագիտական և կրոնական գիտակցության, պատկերային մտածողության և նրա նուրբ գուգորդությունների, օտար ժողովորդի հոգեկան կերտվածքի և քաղաքակրթական այլ երևոյթների ճշմարիտ ըմբռնում, առավել ևս՝ համարժեք

այլալեզու վերարտադրում: Եվ ամեն անգամ, մտովի վերականգնելով համաշխարհային գրականության ծիրում դասականի արժեք ստացած թարգմանությունների մի աստղաբրույլ, կրկին համոզվում ենք, որ թարգմանությունը քաղաքակրթությունների ճշմարիտ ճանաչման և փոխներթափականցման հզոր գործուներից մեկն է, այն խաչմերուկը, որտեղ հանդիպում են դարերը, սերունդները, նաև՝ մեծությունները:

Այլ հարց է հաջողվածի և անհաջողի, դասականի և միշտակի խմբիրը, ինչի ընաւումամբ գգայուն է նախ՝ ընթերցողը, ապա՝ ժամանակը: Ժողովրդի գնահատականն ու հիշողությունն են ժամանակի մեջ կենաւունակ պահում և բյուրեղացնում թարգմանական արվեստի գործը, վերածում այն իր հոգևոր ժառանգությանը, առավել հարուստ և անխոցելի դարձնում սեփական քաղաքակրթությունը:

Սյաօրվա հայ ընթերցողը, ոչ վաղ անցյալում ուսերից թոթափեղով մեծ ընտանիքում ապրելու «քեռը», հայտնվել է իրեն անծանոթ և անհայորդ մի նոր հասարակության մեջ: Վերարժնորման եկացներում և կորսված կողմնորոշումներում շվարած՝ նա իրավունք ունի թերահավատորեն մտածելու, որ պարսից միջնադարյան պոետը չի կարող սպեղանի դառնալ իր հոգահն: Եվ կախավի՛ իր համար պարզելով մի հին ու մաշված ճշմարտություն՝ դասականները ժամանակից դուրս են:

Եթե ասվածին ավելացնենք նաև այն, որ նրանց գաղափարներում կարելի է ժամանակակից մոդեռնիստական ուղղություններին բնորոշ բազմաթիվ երևույթների արմատներ որոնել, ապա կարծում ենք, առավել կգրավենք այսօրվա ընթերցողի՛ մերձեցնելով երկու պատմամշակութային երևույթները՝ միջնադարը և ժամանակակիցը:

Իրականում պարսից բանաստեղծների մոտ ընթերցողը կարող է հայտնաբերել ոչ միայն իր պարսկա կենսաձևի մոդելը, այլ նույնիսկ «շուկայական հարաբերությունների» տերմինաբանությունը: Արևավասիկ 12-րդ դարի ազատախոհ բանաստեղծ Խաղանի Ծիրվանիհն վերագրվող նամակի մի քանի տողը.

«Ինչպես են ձեր գործերը, ինչպես է ձեր կյանքը. այստեղ, որտեղ դուք եք, ինչպիսի՞ն է մարդկություն կոչվածի

պահանջարկը, ինչպիսի՞ն է հավատարմության շուկայական գիմը, գիտության ապրանքին ի՞նչ գիմ են տպիս: Այնուեղ, որտեղ ես եմ, մեծագույն լճացում ե»:<sup>1</sup>

Երեք դար ավելի ուշ Ալիշեր Նավոյին մեզ է հասցնում իր ժամանակի պատկերը. «Դպրանոցում գիտություն, առաքինություն ու ճշմարիտ գիտելիք կա այնքան, որքան մահմեդական հավատ՝ քրիստոնեական վանքում, հոգենվիրում աղոթքի մարդկանց մոտ այնքան, որքան գինետանը՝ աստվածավախություն..., մարդկանց մեջ մարդկայնության հետք չկա. ոչինչ չի երևում, բացի չարագործությունից»:<sup>2</sup>

Խսկ ավելի վաղ, երբ Խորենացին ազդարարում էր, թե. «...Վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը...»<sup>3</sup> (բոլոր ընդգծումները մերն են - Ա.Կ.), նույնպես մարդու և աշխարհի փոխարարելությունն էր արտահայտում, դրամից բխող անզորության և մենության տագնապով, որի կերպափոխությունը 20-րդ դ. մարդուն կանգնեցրեց գոյաբանության բարդ փիլիստիկայության (existentialism) առջև: Ինչպես գոյատել և արարել հավատի, գիտության և հումանիզմի կործանման պայմաններում: Ահա այն դրամատիկ երկնուրանքը, որ հաղորդակից է դարձնում բոլոր մշակութային աշխարհներին և բոլոր սերունդներին:

Մենության ֆենոմենը խարսխված է մարդկության պատմության արմատներին: Չգիտենք՝ հասցնո՞ւմ էր արդյոք կենսարանական Ես-ը պահպանելու հնքում բնության մեջ ապրող մարդը գիտակցել իր մենությունը, սակայն միշտադարի մարդը լուծումներ էր որոնում: Նա իր հոգեկան բնազդային պահանջնումքի մի մասը լրացնում էր Աստծո գոյությամբ, որը, սակայն, չէր փրկում մենության սարսափից, քանի որ անլուծելի էր մնում մահվանը հակադրվելու, ինչ-որ կերպ Ես-ը հավերժացնելու անհատապաշտական ձգուումը: Եվ մարդու պրատող միտքը դրա լուծումը տեսավ Աստծո հետ միանալու և մրա մեջ տարրապուծվելով՝ հավերժանալու գաղափարում, ըստ Էնության իուացիոնալ մի երևույթ, որի անունն է միատիցիզմ:

**Մ**իստիցիզմը (mystika-խորհրդավոր, գաղտնածիսային՝) որպես կրոնակիլիխոփական աշխարհայացք, ունի հնագույն և խոր արմատներ: Այն մշտապես ուղեկցել է և՛ հնագույն հավատքային ձևերին, և՛ համաշխարհային բոլոր կրոններին՝ հարմարվելով նրանց և տարափոխվելով: Եվ, չնայած գաղափարաբանական դրսնորման տարբեր ձևերին, միստիցիզմի հիմնական նպատակը, այն է՝ շփումը, մերձեցումը կամ «հանդիպումը»<sup>4</sup> Աստծո հետ հոգավառության, էքստազի (extasis) միջոցով, մնացել է անփոփոխ: Միաձուլումը Աստծո հետ գերզգայական ոլորտին պատկանող երևույթ է, և ամեն միասիկ յուրովի է զգում նրա հետ միացման պահերի բերկրանքը և հոգեվիճակը (transe):

Սուֆիզմը (արար. սուֆ՝ կոպիտ, բրդյա քուրճ)<sup>5</sup> միստիցիզմի այն տարատեսակն է, որ ձևավորվել և բարձրացել է խլամի հողի վրա: Ծեշտադրումն արդեն իսկ ենթադրում է, որ այն մեծապես հենված է Ղուրանի դրույթներին, շարիաթին<sup>6</sup>, որտեղից սկրում է սուֆիզմի հայտնի երրորդությունը՝ շարիաթը => հոգու կատարելագործման ուղի => ճշմարտությունը:<sup>7</sup>

Սուֆիզմը կոչվում է նաև իպամական միստիցիզմ:

Արդեն 8-րդ դ. սկսած՝ սուֆիզմը մերձեցնում էր մարդկային հոգիները, նվաճում բազմաթիվ երկրներ, քայլ առ քայլ ձևավորում իր աշխարհագրությունը:

Իրանում 11-13-րդ դդ. արդեն սուֆիզմը մուտք էր գործել հոգևոր աշխարհի ամենաբազմազան ոլորտներ, ձևավորել բազմաթիվ մշակութաբանական պատկերացումներ և ինստիտուտները<sup>8</sup>: Սուֆիզմի տարածման հուժկու գործիք դարձավ պոեզիան, որ իր ժամրային և պատկերավորության ողջ համակարգով պատվաստվեց նրա գաղափարներին: Այդ է պատճառը, որ առանց սուֆիզմը ճանաչելու անհնար է հասկանալ պարսից պոեզիայի այն հոգոր շերտը, որ համաշխարհային գրականության մեջ հայտնի է որպես «Աստվածային սեր»: Առավել ևս՝ անհնար է պատկերացում կազմել պարսից միջնադարյան գրականության զարգացման ընթացքի, պարբերականացման, համաշխարհային գրականության մեջ ունեցած նրա տեղի և դերի մասին:

Ասվածը չի ենթադրում, թե պարսից միջնադարյան գրականության մեջ զարգանում էր Միայն Կրոնափիլիստիքական ուղղությունը: Աշխարհիկ գրականությունը շարունակում էր իր բնականուն ընթացքը, սակայն սուֆիզմի ազդեցությունն այնքան մեծ էր, որ հաճախ այն Բնեինակները, որոնք սուֆի չէին և չէին կիսում այդ գաղափարները, երբեմն տուրք էին տալիս այդ շատ նողայիկ ալլարանական կաղապարներին և ոճին:

Այս ծաղկաքաղում Անրկայացված պարսիկ պոետները կամ դասական սուֆիներ են, կամ Էլ Մեծապես խարսխված են սուֆիզմի իմացարանական համատեքստին և այլաբանության գեղագիտությանը (Բարա Թահիեր,<sup>9</sup> Ռումի<sup>10</sup>, Հաֆեզ<sup>11</sup>, Զամի<sup>12</sup>): «Պոետների վերջին դասի մասին պարսիկ հայտնի բանասերներից մեկն ասում է, թե կրում են «միստիցիզմի հուտն ու համը»<sup>13</sup>: Ահա թե ինչու փորձում ենք Անրկայացնել սուֆիզմի այն Բիմնական գծերը, որոնք ձևավորում էին սուֆի բանաստեղծի իմտելեկտուալ իմացարանական աշխարհը և պոետիկան:

Սուֆիական պոեզիայի ամենաակնհայտ առանձնահատկությունը խորհրդանշիչն է, այն պայմանական լեզուն, որ ստեղծվեց պարսից բանաստեղծության ավանդական պոետիկայի և սուֆիզմի գաղափարների սիմեթրիզից: Այլ կերպ ասած՝ պարսից աշխարհիկ բանաստեղծության պատրաստի գեղարվեստական արտահայտչամիջոցները «Բարմարվեցին» նոր բովանդակության՝ ստեղծելով մի այլ որակ, որ կոչվեց սուֆիական: Այսպիսով, չխախտելով բանաստեղծության սովորական պատկերների համակարգը և ժամրային ձևերի առանձնահատկությունները, միատիկները պոեզիա Անդմուծեցին կրոնափիլիստիքական գաղափարների մի հզոր համալիր: Սովորական պատկերների տակ սուֆիները թաքցնում էին ալլախոր մտքերը, որոնք սկզբնական շրջանում հակադիր էին ուղղափառ իսլամի դրույթներին: Այդ հանգամանքը նոյնպես նպաստեց սուֆիների խորհրդանշական լեզվի ստեղծմանը ու կայացմանը: Սուֆիզմի կոնֆորմացումը և «Բաշտեցումը» իսլամի հետ տեղի ունեցավ ավելի ուշ:

Պարսից բանաստեղծության վաղեմի պատկերները և դրանց հետ կապված ամենամուրը և մեքենայորեն ձևավոր-

վոր զուգորդությունները, սովորական կերպարները, ֆունկցիոնալ երևողական բարձրանում էին փիլիսոփայական կատեգորիաների մակարդակի: Սիրելի, յար, ըմկեր, մոմ, լուս, սեր, հանդիպում, բաժանում, միացում, գիշեր, ցերեկ, տուն, հանգվան, գիճի, գավ, գիմետուն, վարդ, սոխակ, խրախմանք, խոպումներ, շուրթեր, աչքեր և բազմաթիվ այլ հասկացություններ սուֆիական պոեզիայում վերահմասառավորվում և դառնում էին պայմանականություն (code), մտածողության այլ համակարգ: Դա բանաստեղծությունը երկիմաստ մեկնաբանելու հնարավորությունն է տալիս: Իրականում հեղինակի գաղափարախոսությանն անտեղյակ ընթերցողը չի տարբերում սուֆիական երկը սովորական՝ սիրայինից:

Ասվածի մողել կարող է ծառայել Զալալ ադ Դին Ռումիի ամեն մի բեյթը<sup>14</sup>:

*Մեկը եկել ու ըմկերոջ դուռը ծեծում է փութեկու,  
Ներսից ասին. «Դու ո՞վ ես, որ կանգնել ես այս դուն մոտ»:*

*«Ես եմ», - եղավ պատասխանը. Աերսից ասին՝ «Ես գնա,  
Քեզ այն խակը դեռ արժան չէ՝ իմ սեղանին հյուր դառնա»:*

*Տիաս սիրող բաժանվելուց, տառապելուց է թրծվում,  
Թե չէ սիրո կեղծն ու ճիշտը ո՞նց հասկանա աշխարհում:*

*Գնաց խեղճը ու թափառեց, անցավ գյուղ ու քաղաքով,  
Այրվեց, վառվեց ու կարոտեց բաժանուի կրակով:*

*Այրվեց, վառվեց ու կարոտեց, թրծեց հոգին ցավի մեջ,  
Ու ես եկավ նոյն դուն մոտ ու նոյն դունը կանգնեց:*

*Տագնապում էր՝ թե երբ բացվի Աերսից փակը դարպասի,  
Հանկարծ նորից չվրիպի, նորից սխալ խոսք չասի:*

*Ներսից հնձեց նոյն հարցումը. «Ո՞վ ես, ի՞նչ ես, ո՞վ անցորդ»,  
«Դու ես, - եղավ պատասխանը, - դու ես կանգնել դուն մոտ»:*

«Եթե ես եմ,- լսվեց Անրոից,- ու ես էլ դու ես, ապա  
Մեկ հոգի ենք, թե չէ տանս երկու հոգու տեղ չկա:

Ասեղի Անդ անցքով երկու թել անցկացնել չփորձես,  
Քանի որ մենք մեկ ենք արդեն, այդ Անդ անցքով մտիր Անրս»:

Այս բանաստեղծության առաջին՝ անմիջական ըմբռնումը  
ընկերության մեջ ճշմարիտ Ավիրումն է, երկրորդը՝ սիրո մեջ  
կամքի դրսնորումը: Ցանկության դեսքում կարելի է ընկալել  
նաև որպես խոհափիլիստփայական և խրատական մի պատ-  
կեր:

Սակայն վկայակոչված բանաստեղծության իրական իմաս-  
տը սուֆիի Անրոին էրության որակական փոփոխությունն է:

Փորձենք վերծանել այն:

«Մեկը»՝ սուֆին է (adeptus), որի հոգևոր ողջ գործութեու-  
թյունն ուղղված է ըմկերող Աստծո հետ հանդիպմանը, քա-  
նի որ, ըստ սուֆիզմի տեսության, աշխարհը և ամբողջ կեն-  
սական գոյր Աստծո արտահեղումն է (emanatio): Աշխարհը  
Աստծո կողմից միատիկական մի էմերգիայով է ստեղծվել,  
հետևաբար Աստված ամենուր է, և ամեն ինչ նրա մի մաս-  
պիկն է կազմում:<sup>15</sup> Մարդը նրա հետ կապի ցածր սանդղակ-  
մերից մեկում է գտնվում և քանի որ նրամից է «բաժանվել»,  
ապա ինտուիտիվ կերպով նրան հասնելու և իր միասնությու-  
նը նրա հետ վերականգնելու ձգտումն ունի:

«Հմկերը կամ սիրեցյալը» (Աստված)՝ անտարքեր է այն  
աղեաստի Ակատումամբ, ով իր անմիջական ճանաչմանը և հա-  
լեցմանը ոչ հասու մեկն է, կատարելագործման անձնուրաց  
ճանապարհը (թարիդաթ) չի անցել: Ինչպես Պլատոնն է  
ասում, «...անմաքուրին չի թուլատրովում Բավկել մաքուրին»:<sup>16</sup>  
Կատարյալին մերձենալու համար կատարյալ պետք է դառ-  
նալ: Իսկ կատարյալը մեկն է՝ Աստված, հետևաբար «Ես»-ը  
աբսուրդ է: Ուրեմն՝ դրույ թակում է պատահական մեկը:

«Խակը» գնում է, կատարելագործման կայաններում (մա-  
դամ) հոգեթիզիկական վարժանքների մեջ կոտրում է անհա-  
տականությունը, բաժանման ցավի մեջ այրում է պարմական  
մարմինը և հասկանում, որ «Ես»-ը ունայնություն է, իսկ  
«Դու»-ը հավերժություն:

«Այրվելը» նյութական մարմինը չգգալու, ճրանից դուրս գալու, վերջնականորեն Աստծո մեջ տարրալուծվելու պահն է, որ կոչվում է ֆանա (annihilation)<sup>17</sup>: Դրան հաջորդում է հարատևումը (քաղա): Զամին գրում է.

*Ամէության աշխարհից գոյության կողմը ընկա.  
Օտարական մի անցորդ՝ այս կյանքի հողմը ընկա.*

*Ասի՞ Զամի, ի՞նչ կուզես այս կողմերում, ասացի՝  
Ամէություն... ուր իսպառ գոյության հետքը չկա:*

Ամէանալու և ոչնչանալու ալլաբանությունից է գալիս սուֆի բանաստեղծների հակումը այրվող մոմի, ինչպես նաև մոմի և թիթենող դրամատիկ սիրախսաղի նկատմամբ: Երբ թիթենող միանում է մոմի կրակին և այրվում ճրա բոցի մեջ, ապրում է սիրային էքստազի պահ: Այդ ժամանակ անհետանում են մարդուն նյութական աշխարհի հետ կապող բոլոր եզրերը, և անհատը վերածնվում է նոր որակով՝ որպես Աստված և Առաջնային: Սուֆիները հենց այդպես էլ հայտարարում էին ի լուր աշխարհի: «Ես Աստված եմ»: Համաշխարհային միատիցիզմի պատմությանը հայտնի են նահատակ սուֆիներ Հոսեին Հալաջը և Բայազիդ Բասթամին:<sup>18</sup>

«Թափառելը» նույնպես խորհրդանիշ է. այն ցուց է տալիս միատիկի հոգևոր կատարելագործման ճանապարհի բազմաթիվ հանգրվանները (Մանզե), որոնց հետևողական հայթաբարումը տանում է դեպի Աստծո «Տուն»:

Մեկնաբանման նման բանալի տալիս է Բաբա Թահիների քայլակը.

*Ես այն ոենդը<sup>19</sup> եմ, որին դերվիշ եմ ասում,  
Չունեմ տանիք ու ապաստան, պատ ու պուն.*

*Հուսանում է՝ պտտվում եմ քո տան շուրջ,  
Գիշերները՝ գիշերում եմ ավագում:<sup>20</sup>*

Սուֆիները (նաև՝ դարվիշ, ոենդ, դալանդար), մախաղը ու սից կախ, թափառում էին միջնադարյան արևելքի քաղաքնե-

րում և ծալրամասերում, տարածում իրենց գաղափարները և նվաճում մարդկային սրտերը: Դրանք հիմնականում «զանգվածային» սուֆիզմի մերկալացուցիչներ էին, հաճախ՝ ապահովակառապային տարրեր: Այդ կերպ հաճապազօրյա հաց վաստակելը, մուրացկանությունն ու ծալրադրաստությունը հոգու վարժանքի ձև էր, միասիցիզմի էությանն ամրարի հապարտությունը, ինքնասիրությունն ու արժանապատվությունը կոտրելու միջոց:

Սիրտը սուֆիզմում կարևոր դեր ունի: Այն նման է հայելու, որի մեջ արտացոլվում է աստվածային լուսը, բայց Աստծո պատկերի արտացոլման համար այն հարկավոր է համապատասխան ծևով փալեցնել: Ծշմարտության ճանապարհը բռնած մարդու բոլոր ջանքերն ուղղված են այդ հայելին փալեցնելուն, այսինքն՝ «բարոյական կատարելագործման»<sup>21</sup>:

Զամին սիրութի-Աստծուն ուղղակի լուս է անվանում, իսկ մնացյալ ամեն ինչ՝ հայելիներ, որոնք այդ լուսի բեկման տարբեր դրսերումներն են: Աստվածային էությունը մեկն է (զար), իսկ ատրիբուտները՝ (սէֆաթ) տարբեր:

Իմ սիրութին մեկն է, դիմացը, սակայն,  
Հարյուր հազար հայելի կա զանազան.

Նրա դեմքը յուրաքանչյուր հայելի,  
Ճուց է տալիս՝ ի՞ր մաքրության համաձայն:

Զալալ առ Դիմ Ռումին միասիկի հոգևոր ճանապարհի  
ողջ փիլիսոփայությունը տեղափորել է մի կարճ տողի մեջ.

Խամ էի... թրծվեցի... այրվեցի...<sup>22</sup>:

Սա կարելի է կոչել սուֆիի հոգեփիզիկական կատարելագործման «մերուրդություն»:

Սուֆիզմում, բացի իւլամական սկզբից (Ալլահը լուսն է երկնքի և երկրի),<sup>23</sup> ակնհայտ է և՝ միթոպականության, և մեռալատոնական գաղափարների մերկայությունը (Աստված լուս է, հոգին լուս է), պամթեշտական տեսության անդրադարձը (Աստված ամենուր է), հնդկական փիլիսոփայության

տարրերի, ասկետիզմի առկայությունը, որ մեկ անգամ ևս ապացուցում է, թե սովորական բեկվում են մեզ հին աշխարհից ծանոթ ոչ իշխամական բազմաթիվ փիլիսոփայական ուսմունքներ, Ազգային և տեսություններ: Հետևաբար, Վատանորեն կարելի է սովորական բազմական տարահամակարգ և բազմածես մի ուսմունք՝ ուղղված Աստվածային Էկության մեջ սովորելու տարրապուժմանը:

Ահա հատված Որումիի դազալից.<sup>24</sup>

Երանելի էր այն պահը, երբ մենք՝ փարպած իրարու,  
Երկու պատկեր, բայց թե հոգով մենք մեկ էինք - ես ու դու:

Այգու բերքը, հավքի երգը անմահություն էր բերում,  
Դարտեզի մեջ մենք էլ ասես մի երգ էինք - ես ու դու:

Աստղերն ամեն մեր շուրջն էին, ու մենք՝ լուսին ճրանց մեջ,  
Աստղերի հետ աստղերի պես բերկում էինք - ես ու դու:

Առանց «եսի», առանց «դուի», ձուված էինք, վերացած,  
Հեռու, հեռու, ասես ուրիշ երկում էինք - ես ու դու:

Թոշունները ուրախության երգեր էին գեղգեղում,  
Ու ճրանց հետ ասես մենք էլ երգում էինք - ես ու դու:

Բայց, ո՞վ զարմանք, երբ մենք իրար գրկում էինք այս պահին,  
Ես իրաքում էի, իսկ դու՝ խորասանում - ես ու դու...

Հենց առաջին բեյթի (Մաթելա) մեջ ակմերև է բանաստեղծության մետաֆիզիկական հիմքը, նյութականի և հավերժականի հարաբերությունը: Աստղերը, լուսինը պայմանականություններ են, որ ապահովում են դազալի սիրային միջավայրը, մյուս կողմից՝ որպես սովորական եզրույթներ, ընդգծում մեծ տիեզերքի և լուսի գաղափարը: Դրանք միաժամանակ խորիրդանշում են նաև երեկո, գիշեր՝ կապված սովորական ծիսականության հետ: Հայտնի է, որ հոգեվարժությունները, առանձին թե խմբակային, ինչպես նաև շփումը և միաձուու-

մը Աստծո հետ սովորաբար իրականանում էին գիշերները։ 4-րդ և 5-րդ բեյթերը սուֆիզմի հիմնական վարդապետության բանաստեղծական արտահայտությունն են. չկան սուբյեկտներ, կա Միասնություն։ Զարմանքը վերջին բեյթում միայն փիլիսոփայական և գեղագիտական երևույթ չէ. այն միասիկական վիճակներից (հայ) մեկն է։ Երբ սուբյեկտը թողնում է իր էմպիրիկ ԾԱ-Ը, նրան պատում են զմայլանքն ու զարմանքը։ «Հենց որ հոգին զգում է այն աշխարհի ազդեցությունը, անմիջապես ընկնում է հուզումնքի և բաքոսային խանդակառության մեջ, լցում բուռն սիրո կրքով»։ «Նա երկրային սիրահարի նման, որ սովորաբար ջանում է իր սիրո օրինեկտին նմանվելով, առավել գեղեցիկ և առավել շնորհալի դառնալ, ձգուում է նմանվել բարձրային»<sup>25</sup>.

Համաշխարհային գրականությունը հարուստ է կրոնափիլիսոփայական քնարերգության նմուշներով, միատիկ գրողների գիշերային «Բանդիապումների» գաղտնիքներով, սիրո ամենավառ արտահայտություններով։ Հաճախ անթաքուց են նրանց շանքերը՝ նկարագրելու իրենց ողջ էլույթունը համակած տիեզերական ամբողջության տրոփունքնը։ Այս ամենի հենքի վրա մեզ այլևս մտորելու տեղիք չի տալիս «Երգ երգոց» քնարերգությունը և հասկանալի է դառնում նրանում գաղափարականի և զգայականի հրաշալի ներդաշնակությունը։

Որոմիի դազալի փիլիսոփայական տրամաբանությունը մասնիկի ձգուումն է ամբողջին և միասնականորեն՝ հավերժացումը<sup>26</sup>։ Այդ գաղափարը ամենասրբամատիկ գովներով է նկարագրվում եղեգի երգում, որին կտրել են արմատից՝ մայր եղեգնուտից և դարձրել սրինգ։<sup>27</sup>

**Ականջ դրեք դուք սրինգին, տեսեք, թե ինչ է ասում,  
Նա բաժանման իր մորմոքից, իր ցավերից է խոտում։**

**Թե՛ այն օրը, երբ ինձ իմ մայր եղեգնուտից կտրեցին,  
Կին, տղամարդ, ծեր ու մանուկ ինձ հետ իմ վիշտը լացին։**

**Հիմա էլ ես սիրու եմ փնտրում՝ վառված այդ նովս կրակից,  
Որ պատմամ իմ ցավը նրան, որ դառնա ինձ կարեկից։**

Ամեն էակ, որ արմատից պոկված, ընկած է հեռու  
Ուր է գնա, վերադարձի պահն է անվերջ փառորելու:

Երջանիկ սերը գոեղեն հազվադեավ երևոյթ էր պարսից  
միշնադարյան պոեզիայում: Ավանդական էր սիրեցյալի բա-  
րենամանությունների խորքի վրա ձևավորված «դժբախտ» սի-  
րահարի կերպար՝ միշտ մերժված, միշտ բաժան իր սիրե-  
ցյալից: Մինչդեռ կարելի է եզրահանգել, որ սուֆիզմի հետ  
պոեզիա մուտք գործեց փոխադարձ սիրո գաղափարը, երբ  
չկան սուբյեկտներ, այլ կա երջանիկ Միասնություն (Վահրամ  
ալ վուզու): Ինչ վերաբերում է սուֆիական բանաստեղծա-  
կան արվեստին, ապա ակնհայտ են կրկնությունները, այսու-  
րացիաները և ասոնանները, միապահադ, երկարածիգ-եր-  
գային չափը, որոնք հոգեբանական մեծ դեր ունեին հատկա-  
պես ի բնե միստիկ էություններին զմայլելու, նրանց մեջ ան-  
հասկանալի կարոտի զգացում առաջ բերելու և եքստազի  
հայսապատրաստելու գործում: Կարծիք կա, որ Ռումիի քնա-  
րերգությունը նրա կողմից ստեղծվել է հենց սուֆիական հա-  
վաքությունների (մաջլես) ժամանակ: Հոգենքիզիկական վար-  
ժանքների կատարամերթը (se'anse) կոչվում է զեքը (հիշատա-  
կում, Աստծո անունը տալ):

Սերը Աստծո անկապտելի հատկանիշն է:

Կեցք սերը, կեցք սերը, որ մեր սերն է, ո՞վ Բատված,  
ինչ հրաշք է, և ինչ բախտ է, որ նա մերն է, ո՞վ Բատված:

Ինչքան ջերմ ենք, ինչքան ջերմ ենք, սիրո արևն է մեր մեջ,  
Սերը գաղտնի ենք ու մերը բաց ենք, սիրո տերն ենք.

ո՞վ Բատված:

Վանդակում չենք, և ինչո՞ւ ենք գամվել-կպել այս կյանքին,  
ի՞նչ շղթա է, որ ցանցել է մեր ոտքերը, ո՞վ Բատված:

Լուսի գաղափարը, որ իր դասական ձևն էր ստացել  
զրադաշտական կրոնի՝ Միթրայի (Միհր) պաշտամունքում,  
համամարդկային երևոյթ է՝ հատկանշական բոլոր պատմա-  
կան ժամանակաշրջաններին և քաղաքակորթական աշխարհ-

Աերիս: Լուսն իր բոլոր տարակիոխովուններով՝ փայլ, ջերմություն, գույն և՛ն, սուֆի բանաստեղծների պոետիկայում առաջնային տեղ է զբաղեցնում: «Աստված լուս է» դրույթը մեծապես ձևավորում է միստիկ բանաստեղծների էպետիկան և առանձնապես բինար մտածողությունը (լուս-խավար, կյանք-մահ, լավ-վատ, արև-փոշերատիկ, ամբողջ-մաս) և հակաթեզերի նկատմամբ սերը, որն, ի դեպ, նաև մեր Նարեկացու պոետիկայի ակնհայտ dominans-ն է:

Սուֆիզմի մշտական ուղեկիցն էր ասկետիզմը (askesis): Այն սկավում էր ճգնակյացի կոպիտ, բրոյա հագուստից և ավարտվում էր ինքնազրկման և տաճածեսի ամենաբարդ և բազմազան ձևերով: Պատահական չէ հայոց մեջ տարածված ժողովրդական «շալե շապիկ» խոսքը:

Սուֆիզմի հայտնի բանաձևներից մեկն էր. «Միմի պես փափուկ, ասեղի պես մերկ և մազի պես բարակ», որ նշանակում էր՝ «Ես»-ը կոտրել հոգևոր ուսուցչի (մորչեր, փիր, շեյխ) ձեռքերում, հրաժարվել նյութական բարիքներից ու ինչքից և հոգևոր վարժանքների մեջ մաշել մարմինը: Ի դեպ՝ սուֆիի կամքի դրսնորման առաջին պայմանը, որ ասկետիզմի հոգին էր, մարդկային ցածր կրքերը, ցանկասիրություն կրող Ես-ը (Յափս) մեռցնելու պարագան էր:

Սուֆիների ամափայ երեմն ներկայանում էր իբրև մարմնից ամկախ կենսաբանական երևոյթ: Օրինակ, «և շան, աղվեսի կամ մկան» կերպարանքով:<sup>28</sup>

Բարա Թամեն.

Աչք ու սիրտս մեղքի մեջ են գցում ինձ,  
Աչքս տեսնում, սիրտս տաճածվում է թախծից:

Մի սուր սարքեմ, խրեմ անկուշտ աչքիս մեջ,  
Սիրտս փրկվի զրա նայած - տեսածից:

Միջնադարյան սուֆիական երկերում հաստուկ գլուխներ են նկարված հոգևարժությամ տարրեր ձևերին: Հետաքրքիր է պատամիների հայումը՝ «Ան նազար ֆի ալ ահդաս»: Գեղեցիկ պատամիները սուֆիական եղբայրություններում դիտվում էին որպես առաջնային անփոփոխ էության (substantia)

ηριανηροιμ, Ι ορωνδ φεηεցկույթան մեջ սևեռվելով՝ միստիկը առնչվում էր Աստծուն: Մանչի Ակատմամբ զգայական բռնկումներն ու այլ դրսնորումները բացավլում էին: Դա մի փորձաքար էր սուֆիի կամքը ստուգելու: Տաճածեափ այդ ձևին մասնակցում էին միայն թրծված սուֆիները:<sup>29</sup>

*Մեռեք, մեռեք ու մահացեք սիրով արրած, սիրո մեզ  
Սիրով արրած մահանալը երանություն է անշեզ:*

*Մեռեք, մեռեք ու մահացեք, մի վախեցեք այս մահից,  
Պոկվեք հողից, ու կակսի կյանքը անդորր ու անվեճ:*

*Մեռեք, մեռեք ու մահացեք, փախեք հյութից ու կրքից,  
Նյութ ու կրքի կապանքներում հոգին գերի է ու խեղճ:*

*Քլունգն առեք ու խորտակեք զնդանները մարմնավոր,  
Թե խորտակեք, արքա եք դուք ու շահնշան եք մի պերճ:*

13-րդ դ. գերմանական միստիցիզմի ջատագով, փիլիխափա և աստվածաբան Մայստեր Էկիարտի հետ կապված մի ավանդազրույց պատմում է, թե փիլիխափան մի օր տեսնում է հրաշալի, մերկ պատանու և հարցնում, թե որտեղից և ուր է գնում: Տղան պատախանում է, որ Աստծո մոտից է, գնում է Աստծո մոտ, կգտնի նրան այնտեղ և կթողնի բոլոր իրերը: Ինքը արքա է, և իր արքայությունն իր սրտում է: Մայստեր Էկիարտը նրան հագուստ է առաջարկում, որից նա հրաժարվում է՝ ասեղով. «Այդ դեպքում ես չեմ լինի արքա»<sup>30</sup>:

Այս գեղեցիկ մանրապատումը բերվեց միայն նրա համար, որ մեկ անգամ ևս ընդգծվի քրիստոնեական և իշլամական աշխարհների իրական խորքային ընդհանրությունները: Հաճախ երևույթը ծնող արմատներն են հասկանալի դարձնում, որ երկու քաղաքակրթությունները մերձեցնողն ավելին է, քան օտարողը:

Սուֆիզմը ընդունում էր երկու տեսակի սեր՝ ճշմարիտ (Եշի -է հայիոյի) և թվացյալ (Եշի -է մաջազի): Ուշադիր քննության դեպքում պարզ է դառնում, որ ամեն տեսակ սեր փաստորեն սեր է Աստծո Ակատմամբ, քանի որ գլուխություն

ունեցող ամեն ինչ նրա մի մասնիկն է կամ նրա արտացոլումը.<sup>31</sup> Սիրո այս սպակուլյատիվ ըմբռնումից է գալիս երկրայինը մերժելու, ավելի՞ ատելու գաղափարը:

Ոչ ոք, ոչ ոք չի յօափանցում շերտերի մեջ իմ Շերսի,  
Թափանցի՛ է, ճա հասու չէ գաղտնիքներին իմ լուսի:

Իրավ է, որ հոգին մարմնին խառնված է մշտապես,  
Բայց մարմնը պարտեղեն է, հոգին վսեմ է ու վես:

«Մարմինը բանտ է» դրույթը հանգեցնում է մահից չվախենալու սկզբունքին, քանի որ մահը միայն կաղապարի կորուստ է, մինչդեռ հոգին հավերժ է:

Որումիի «Սիրո մեջ մեռեքը» ոչ այնքան կենսաբանորեն մեռնելու հորդոր է, որքան էքստազի պահն ապրելու և մարմնից «դուրս գալու» կոչ: Ավելին՝ արհեստական մահը՝ ինքնասպանությունը, չէր ընդունվում միստիկների կողմից: Դա նշանակում էր հակադրվել Աստծոն կամքին:<sup>32</sup>

Բարա Թամիեր.

Սիրահարը էլ մահից չի վախենում,  
Դատից, բանտից ու ամից չի վախենում:

Սիրահարը սոված գալի նման է,  
Հովիվների հարայից չի վախենում:

Քանի որ հոգին կարող է հասու լինել Աստծուն միայն աստվածակերպ դատնալով, ապա պարզ է, որ անհրաժեշտ է երկրորդ ծնունդը.<sup>33</sup> Մոտածողության այս համատեքստում է ձևավորվում սուֆիի Վերածնունդը: Որումին իր կենսագրության այն հատվածը, որն ապրել է առանց իր հոգևոր ուսուցչի՝ Ծամսի, անվանում է մեռած վիճակ: Նա գրում է. «Մեռած էի, կենդանացա, ողբում էի, ուրախացա»:<sup>34</sup>

Որումի.

Երբ շիրիմ իշմեմ, դու մի մորմոքա, թե անցա անեստ,  
Ինձ սպասում է մի գերեցամիկ վերին հանդիպում:

իմ հողաթմբին մնաս բարովի խոսքեր մի ասա.  
Քանի որ նորից իրար կտեսնենք վերը՝ դրախտում:

Երբ հողում սուզվեմ, իմ համբարձվելը դու պատկերացրու  
Արևամուտին արևագալ է անվերջ հաջորդում:

Քեզ թվում է, թէ ես մայր եմ մտնում, ո՞չ, ծագում եմ ես,  
Քեզ գերեզմանը մի բանու է թվում, ինձ՝ թևարձակում:

Այս ո՞ր հատիկն է՝ հողին ընկնելիս չի ծում նորից,  
Մարդ-հատիկն էլ է հողից դուրս գալիս ու նորից ծաղկում:

Վերածննդի գաղափարը առկա է բոլոր միստիկների գիտակցության և հոգեֆիզիկական գգացողություններում:

Սուֆիի կատարելագործման ճանապարհն ուներ յոթ սանդղակ:<sup>35</sup> Սուֆին, ժամանակի ընթացքում հայթահարելով հերթական աստիճանը, քայլ առ քայլ մոտենում էր իր նախատակին, դառնում կատարյալ մարդ (էնսան-է քամե): Սուֆիզմի բազմաթիվ դպրոցներում և տեսություններում միստիկի կատարելագործման կայանների հայեցակարգը միևնույնը չէր, ինչը, սակայն, սկզբունքային տարբերությունների չէր հանգեցնում: Մեծագովն սովի բանաստեղծ Ֆարիդ առ Դին Աթթարը իր «Թոշունների զրուցը» հայտնի պիեմում մեկ առ մեկ բացահայտում է յոթ փուլերի եռկյունը, մինչև Աստծո հետ միանալու և նրա մեջ անեանալու պահը:<sup>36</sup> Այդ ի մկանի ունի Զալալ առ Դին Ռումին, երբ գրում է.

Սիրո յոթ քաղաք անցավ Աթթարը,  
Մենք դեռևս այդ ճամփի առաջին կնոմանում ենք:<sup>37</sup>

Առաջին աստիճանը մեղքի թողությունն է, գղջումը (թոռե), որը ծնվում է աղոթքով և վերածվում հոգեկան տվայտանքի, ինքնաձաղկման, բողոքի, ողբի ևն:

Սկզբնական շրջանում մինչև սուփիզմի հաջորդ ուսմունքի վերածվելը, իլլամական միստիցիզմն ուներ մի ուղղություն, որը միայն ողբասացությամբ էր արտահայտում սերը Տիրոջ մկատմամբ և այդ ձևով թողություն հայցում գրիծած մեղքե-

րի համար: Այդ ողբասացները Հարուն ալ-Ռաշիդի կնոց՝ Զուբայրայի պալատում հաստուկ կարգավիճակ էին զբաղեցնում և գիշեր-ցերեկ Ղուրան էին կարդում: 9-րդ դարի Բեղինակներից մեկը գրում է, թե գիշերային Բաղրատի փողոցներում ամեն կողմից լսվում էր դուրսանասացների ձայնը, որ հոսում էր, ինչպես ջուրը ջրհորդացներում<sup>38</sup>:

Սոլորքի տարբեր ձևերը (բարձրաձայն, մտովի, ցերեկային, գիշերային, մերբողային, երախտագիտական, խնդրողական և ան), ինչպես նաև միատիկների պոեզիային բնորոշ (այդ թվում նաև՝ «Նարեկացում») կրկնությունները, հարակրկնությունները, հակադրությունները, խտացումները և ան, տեխնիկական միջոցներ են՝ համապատասխան վիճակի նախապատրաստվելու և Աստծո հետ առնչվելու համար:

Ղուրան կարդալը և այն լեզը (սաման՝) հոգեվարժության ամենատարածված ձևերից մեկն էր: Ծեյսերի վկայությամբ՝ մի գիշերվա ընթացքում 70 հազար անգամ կրկնում էին Ղուրանի «Թահիլի» կոչվող աղոթք-բանաձևը. լա-իլահա-իլ լա-լ լահ... (Զետ Աստված բացի Ալլահից... և այլն):<sup>39</sup>

Հադիսը<sup>40</sup> ազդարարում է. «Եթե դուք իմանայիք այն, ինչ գիտեմ ես (Մուհամադը), դուք կմոռանայիք ծիծաղել և շատ կողբայիք»:<sup>41</sup> Իրավամբ, սուֆիզմ՝ որպես գաղափարախոսություն, մեծապես ձևավորվել է իսլամի և մոռա սուրբ գործի Ղուրանի հողի վրա:

Զարմանալի չէ վաղ շրջանի «ժողովրդական» սուֆիզմի շատագով, դարվիշ Բարա Թամիների դորեկյունների ընդունված թախծուտ տրամադրությունը: Դրամբ մի այնպիսի տրումությամբ են համակված, որ անգիացի հետազոտող Հերոն Ալեքսանդր Արան նվիրված իր ուսումնասիրությունը կոչել է «Բարա Թամիների ողբը»<sup>42</sup>: «Թամինծը» սուֆիի մոտ այն հոգեկան վիճակն է, որը գալիս է մոռա կատարած մեղքերի սուր գգացողությունից և անձի անկատարությունից:

*Սիրտս վերք է, սիրտս վերք է, սիրտս վերք,  
Բժիշկ բերեք, նեքիմ բերեք, ճար արեք...*

կամ

*Մի շինական եղել, հնձում էր դաշտը,  
Լացող աչքով, բայցն հնձում էր դաշտը.*

ԵՎ ԲԱՃՈՒՄ ԷՐ. և մրմաճում՝ «ԱՇԱ ափսո՞ս».

Որ կակաչից ամայացնում էր դաշտը:

11-13-րդ դդ. արդեն կայացել էին սուֆիական եղբայրությունները և միաբանությունները՝ իրենց ողջ ծիսական համակարգով, ներքին կառուցվածքով, հարաբերությունների աստիճանակարգով, էթիկետը պահպանելու պարտավորությամբ և համընդհանուր բարոյական նորմերի խիստ կիրառմամբ: Ավելի՛ ստեղծված էին նաև սուֆիի վարքագիծը ձևավորող կանոնագրքեր:

Այլորինակ կանոնագրքի մի նմուշ պահպանվել է նաև հայոց մեջ: 13-րդ դ. Երգմկայում գործել է «Երիտասարդաց միություն», որը, ինչպես պարզվում է, գերծ չի եղել նաև կրոնական-աղանդավորական ազդեցությունից: Նրա անդամների վարքն ու վարկելաձևը կարգավորող կանոնադրությունը մեզ է հասել «Սահման և կանոնք միաբանութեան եղբարց...» անվամբ<sup>43</sup>: Կանոնադրությունը կազմել է Վարդապետ Հովհաննես Երգմկացին: Պահպանվել են տեղեկություններ, որ Երգմկայում էին ապաստանել բազմաթիվ աղանդավորներ, որոնց հոգևոր ուսուցիչը Գորգ անունով մեկն էր<sup>44</sup>, որը միայն մտքում և ծածով էր արտասանում «Հայր մերը»: «Ոչ ասել շրմամբ Հայր մեր յերկինն...» Երևույթը ներքին աղոթք էր, հոգևորժանության ձևերից մեկը, որ, օրինակ, սուֆիական «Նաղշերանդիե» եղբայրությունում նույնպես կիրառվում էր: Լուրջամ և հզոր կենտրոնացման այս ձևը ընդհանրություններ ունի նաև բյուզանդական «փսիխազմ» կոչվող միստիկական ուղղության հետ, որը ձևավորվել էր ավելի վաղ՝ 4-7-րդ դդ.:

Տարբեր եղբայրություններում տարբեր ծիսակարգ էր կիրավում: Սովորական էր տաճածեսի վերոհիշյալ ձևը՝ աղոթքների անընդմեջ կրկնությամբ, Ղուրանի հաստվածների և բանաստեղծությունների երգատիա ընթերցմամբ (recitare), եղեգից պատրաստված սրինգի նվագով, պարով: Զալալ աղ Դին Ռումիի «Մելվելիե» կոչվող օրդենում ընդունված էր «Պտտվող դարվիշների» պարը, այլոց մոտ՝ երգը, ծափը, շորերի պատառոտումը ևն:

Սակայն, ինչպես ամեն ինչ ունի իր սկիզբը, զարգացումը ու ավարտը, սուֆիզմն էլ ետևում էր թողնում մեծ տեսաբան-

Աերի և բանաստեղծների ժամանակը: Զնայած այն որոշ երկրներում մինչև օրս էլ գոլովթուն ունի, սակայն 14-րդ դարն արդեն համարվում է սուֆիզմի անկման սկիզբ:

Բազմաթիվ երկրներում սուֆիզմի անկումը տարբեր ժամանակաշրջան էր Աերառում և տարբեր ձևով դրսւորվում, սակայն ինչպես Ս. Արքերին է սրամտում, կար մի ընդհանուրթուն, որ բնորոշ էր բոլորին՝ խարեւայությունը թաքցնելու թոփքի քողով, ապրել՝ խայտառակ, գործել՝ անպարկեցու, խոսել՝ անհասկանալի: Այդ էր (ուշ շրջանի սուֆիի - Ա.Կ.) հեշտ ճանապարհը դեպի փառք, հարստություն և իշխանություն:<sup>45</sup>

14-րդ դ. Իրանն ապրում էր իր պատմության ծանր շրջաններից մեկը: Մոնղոլների ավերիչ արշավանքները, երկրի անկախության կորուստը, իշխանության համար դաժան հաշվեհարդարները, երկառակություններն ու իրար հաջորդող գահակալներն իրենց նոյնքան արագ փոփոխվող բարերով և օրենքներով համատարած հուսալքություն էին տարածում: Թվում է, թե այդ ամենը պիտի նպաստեր միատիցիզմի աշխուժացմանը, սակայն սուֆիզմն այնքան էր նեռացել իր նախկին «դեմոկրատական» գաղափարներից, որ կորցրել էր ազդեցությունը լայն զանգվածների վրա: Հենց այդ շրջանի սուֆիներին պարսից հայտնի գրականագետներից մեկն անվանում է «քարոզիչներ, որոնք չեն հետևում իրենց քարոզներին»:

Այդահին էր պատմական իրավիճակը 14-րդ դ. Ծիրազում, ուր պալատին և արքունական միջավայրին մերձակից ապրում և ստեղծագործում էր Հաֆեզը: Ծիրազը, ի դեպ, ծայրամասային լինելու «առավելությամբ», որոշ չափով զերծ էր մնացել մոնղոլների ավերածություններից, մեծ կոտորածներից և թալանից:

Երբ Հաֆեզը մտավ գրական ասպարեզ, կառծես թե բոլոր խոսքերն արդեն ասված էին: Պարսից և' աշխարհիկ, և' կրոնափիլիսոփիայական գրականությունն անցել էր իր ճանապարհի փառավոր հասկամը: Բանաստեղծական արվեստում արդեն ստեղծված էին չափանիշներ. Ֆիրդուսին՝ Էպոսում, Օմսորին՝ դասիդե-Անդրոդում, Նիզամին՝ աշխարհիկ, իսկ Սաային և Աթթարը՝ միատիկական պոեմում, Խաջամը՝ քաղյա-

կում: Ղազալը, որի արմատները գնում են դեպի Ռուսաքի, Առ բովանդակություն և գեղագիտություն էր ստացել Ռուսիի, բյուրեղացել և ձևական օրենքների մեջ կանոնարկվել Սաս-դիի արվեստում:

Ի՞նչ էր մնում Հաֆեզին, եթե ոչ ետ բերել հինը, վերա-դառնալ անցած արժեքներին: Խակ հետահայաց արվեստը մի-այն գեղագիտական խնդիր չէ, այն իր մեջ կրում է նաև հոգևոր որոշակի կողմնորոշումներ:

Սակայն Հաֆեզն իր խոսքն ուներ ասեղու: Նա գալիս էր դագաղի ժամանակին ձևը իր ամրկնեղի բարձրությանը հասց-նելու և հետնորդների համար չափանիշ դառնալու, մի բա-նաստեղծության մեջ թեմաների ինքնակա (spontaneus) բազ-մազանությամբ իր ժամանակակիցներին և հետազոտողներին ապշեցնելու, դագաղի ձևի և ձերքին կառուցվածքի միջև դա-րեր ի վեր հաստատված կայունությունը խախտելու, բեյթե-րին ազատություն տալու, ժամանակին համակարգում դագաղի անվերապահ առաջնությունը հաստատելու:

Հաֆեզի վերլուծաբանները, որպես կանոն, սկսում են մի խնդրից: Սուֆի<sup>o</sup> էր նա, թե՞ ոչ: Այդ հետաքրքրությունը գա-լիս է ոչ այնքան նրա հոգնոր կողմնորոշումներն ու կենա-գրական դիմագիծը ճշտելու ցանկությունից, որքան բանա-ստեղծությունը ճիշտ ըլբունեղու անհրաժեշտությունից: Եթե սուֆի է, ուրեմն՝ պոետիկայի բոլոր մակարդակներում առկա է այլաբանությունը, եթե սուֆի է, ուրեմն՝ մեր մտքից խապա պիտի համեմք նրա պոեզիային հաստոկ աշխարհիկ ազատա-խորությունը:

Մենք հավակնություն չունենք այդ խնդրին վերջնական պատասխան տալու, մանավանդ որ տարակարծ ուսումնասի-րողների շարքում կան մեծ հետինակություններ և նրբագեղ պոեզիայի գիտակներ: Սակայն վստահ ենք, որ եթե անգամ Հաֆեզը սուֆի կամ սուֆիամետ է, ապա նրա սուֆիզմը բարձրանում է անցյալի մեծությունների ընդեղքից (Սանայի, Աթթար, Ռուսի), որը խորապես ճանաչված էր նրա կողմից, բայց ոչ ապրած, քանի որ սուֆիզմը ակտիվ հոգեֆիզիկա-կան գործունեություն էր, իսկ Հաֆեզի՝ մեզ հասած կցկոտոր կենագրությունը, այնուհանդերձ, այլ բան է ասում: Նա կյանքի մեծ մասն անց է կացրել շահական պալատին մերձ

և ըստ որոշ աղբյուրների՝ կլանքի վերջին շոշանում միայն որդեգրվել սուֆիական եղբայրության:

Չատերը հենվում են Զամիի կարծիքի վրա, որը Հաֆեզի մահից ընդամենը 25 տարի հետո է ծնվել։ Ըստ նրա, սուֆիական պոեզիայի դիվանների մեջ չկա ավելի լավը, քան Հաֆեզինը։

Սակայն 20-րդ դարի Հնդկաստանի մեծ բանաստեղծ և փիլիսոփա, պոետիկայի գիտակ Մոհիմանադ Էղբալը գորում է. «Ես խորապես համոզված եմ, որ Հաֆեզը իրական քնարերգու է և նրա պոեզիայից սուֆիական ճշմարտություններ քաղելը մնում է նրա հետագա մեկնարանների խոճին»<sup>46</sup>։ Պարսից հայտնի գրականագետ Արդ ալ Հոսեին Զադինքուրը, որ Հաֆեզի կլանքի և գործի լավագույն վերլուծարաններից է, իր «Ռենդերի նորանցքում» աշխատության մի հատվածում Հաֆեզին մեկնարանում է «Մզկիթի և գիմնաստ միջև» վերնագրի տակ։<sup>47</sup> Մեկ այլ քննության մեջ նա գորում է, թե անկարելի է Հաֆեզի Դիվանի բոլոր յազալները վերագրել նրա միստիկափիլիստիկայական գաղափարներին և այդ կերպ մեկնարանը դրանք, քանի որ դա կնվազեցնի մեծ բանաստեղծի արվեստի կարևորությունը և արժեքը։ Ըստ նրա, Հաֆեզի որդ Դիվանում, ամենամիատիկական յազալներում անգամ կան բեյթեր, որոնք ակնհայտորեն ընդգծում են այդորինակ մեկնարաննան անհմտությունը։<sup>48</sup>

Իրավամբ, Հաֆեզի որդ պոեզիան հաստատում է, որ նա երկփեղկած էր աշխարհիկի և միստիկականի, ազատախոհության և հնազանդության, իրականի և այլարանականի միջև։ Հաֆեզը միշնադարյան մտածող էր՝ ձևավորված և դաստիարակված Ղուրանի պատկերացումներով և բարոյագիտությամբ։ Նրա ապստամբ և ըմբռաստ ոգին վերագրել անհավատությանը, սուֆիական վարիացիաները՝ միստիցիզմին, իսկ հուսահատությունը՝ մինիլիզմին, նշանակում է կտրել Հաֆեզին իր միջավայրից և ժամանակից։ Մեծությունները, կամա թե ակամա, իրենց մեջ ներառում են դարի և ժամանակի ոգին, նաև ցավալի հակասությունները։

Այդ ամենից ելեղով՝ փորձենք սուֆիզմի ընդհանուր խորքի վրա քննել նրա պոետիկայի մի քանի առանձնահատկությունները։

Հաֆեզի կենսագրությունից չմշին տեղեկություններ են մեզ հասել: Դրա փոխարեն ժողովուրդը բազմաթիվ ավանդագրուցներ է հյուսել ճրա անվան շուրջ: Այսօր դժվար է կրանել, թե դրանցից որոնք են ճշմարիտ, և որոնք՝ մտացածին: Փաստն այն է, որ ճրա դազալներին վերագրվել է մոգական մի ուժ, անհասկանալի մի զորովոյում, որի նմանը մենք տեսնում ենք մեր ժողովուրդի մեջ Նարեկացու Ակատմամբ: Հաֆեզին անվանել են «Գաղտնիքների լեզու» (լեսան ալ ղեյր), «առեղծվածների թարգման» (թարջուման ալ ասրար) և ճրա բանաստեղծությունների Դիվանով<sup>49</sup> բախտ են գուշակել:

Ավանդագրուցը հավաստում է, թե Ծոշան, որ Հաֆեզին ժամանակակից և բարեկամ շահերից մեկն էր, և ինքն էլ բանաստեղծություններ էր գրում, դիտողովոյուն է անում Հաֆեզին, թե ճրա դազալներում թեմայի միասնություն չկա, բերերը իրարից անկախ են, որն էլ հակասում է պերճախոսության և պոետիկայի արվեստի օրենքներին: Հաֆեզը պատասխանում է, թե այդ ամենով հանդերձ, իր դազալները շրջում են աշխարհում, իսկ որոշ մարդկանց բանաստեղծություններ դուրս չեն գալիս քաղաքի դարպասներից:<sup>50</sup>

Ղազալներից մեկն ավարտվում է զմանօրինակ տրամադրությամբ.

Ով անձարակ դու հանգաթուին, մի նախանձիր Հաֆեզին,  
Սարդուն տրված ձիրքն ու փայլը Աստծո՛ շնորհն է միայն:

13-14-րդ դդ. դազալը արժանահիշատակ է նաև ճրանով, որ վերջին բեկում պարտադիր հիշատակվող հեղինակի անունը (թախալու) հնարավորություն է տալիս գովերգել իրենց տաղանդը, դրվագել սեփական արվեստը (ֆախը):

Վերոհիշյալ լեզենող հետաքրքիր է ոչ այնքան որպես շահի և բանաստեղծի ավանդական հակադրություն, որքան հա ֆեզյան դազալի ակնառու յուրահատկության փաստում, երևույթ, որ կոչվում է բանաստեղծության մեջ բեկը անկախություն (կամ՝ desintegration):<sup>51</sup>

Թե Ծիրազի փերու փայլից սիրուս բոցերը հուրիրած՝  
իր մի խալի համար կտամ Սամարդա՛նդը և Բուխարամ:

Բեր, մատովակ, խմեմ գիմին: Դրախտն ի՞նչ է, եղբ աչքիս դեմ  
Վարդաստաններն են Ծիրազի, Ռոքնաբանդն է և Մուսալլան:

Հեյ, գնչուներ, բիրու աղմուկով համբերանքս այնպիս տպար,  
Ինչպիս թուրքերն են թալանում քեֆի սեղանն առասուլյան:

Երբ Զողեյխան հանկարծ տեսավ գեղեցկությունը Հովսեփի,  
Նա էլ ցնցվեց սիրո ուժից, նետեց քողը պարկեշտության:

Հանդահայտ դազալի այս հատվածում անգամ ակնհայտ  
է բեյթերի ինքնուրույնությունը: Այստեղ բազմաթիվ թեմաներ  
և մոտիվներ են միահյուսվում: Առաջին բեյթը պարսից բնա-  
գորում հնչում է.

Եթե Ծիրազի այն թուրքը գրավի իմ սիրտը,  
Նրա հնդկական խալին կավիրեմ Սամարդանը և Բոլսարան:

Հետաքրքիր է առաջին բեյթում թուրքերի գեղեցկության  
դրվատումը, իսկ երրորդում Հաֆեզի կողմից բազմիցս կրկն-  
վող ավարառության մասին ակնարկը: Թյուրքերի էթնիկ  
առանձնահատկությունների անդրադարձը պարսից միջնադար-  
յան պոեզիայում հատկապես այդ հակառակությամբ է ակնառու:

Կարծիքներ կան այն մասին, որ առաջին բեյթը ներբռող է՝  
նվիրված իշխանավոր այրերից մենքին: Հնարավոր է նաև  
պատաճու գեղեցկության դրվատում, որը չէր հակասում պո-  
ետիկայի կանոններին, ավելին, այն վաղուց ի վեր ավանդու-  
թի ուժ էր ստացել: Հաճախ գեղեցիկ թյուրք պատահիները  
ծառայում էին արքունիքում և իշխանական տներում, և  
նրանց էր հանձնվում մատովակի պարտականությունը:

Մի սրամիտ լեգենդ մշտապես ուղեկցում է այս դազալը:  
Ասում են, երբ Լեճն Թեմուրը լսել է այն, շատ է զայրացել:  
Նա իր մոտ է կամնել բանաստեղծին ու հարցրել, թե այդ  
ինչ իրավունքը է նա սիրեցյալի մի խալին նվիրում այն քա-  
ղաքները, որոնք նվաճելու համար դաժան պատերազմներ է  
մղել: Հաֆեզը, որ արդեն աղքատ դարվիշ էր, ինքն իրեն  
մատնացուց ամելով՝ պատասխանում է, թե առատաձեռնու-  
թյունն ու շոալությունն են իրեն հասցել այդ վիճակին:

Պարզվում է, որ պողաճայան տրուբադուրները նույնպես Արևելքի և Եվրոպայի հանրահայտ քաղաքները նվիրել են իրենց սիրեցյալներին: «...Այդպիսին է սիրային բառապաշառը, որի միջոցով նա քանաստեղծը- Ա.Կ.) վարում է իր սիրային խոստովանությունը: Սիրութին նրա համար թանկ է առավել, քան Անդալուզիայի և Արևելքի քաղաքները<sup>52</sup>:»

Գինետնից մզկիթ եկավ մեր առաջնորդը հոգու,  
Երբ առաջնորդն է այսպիսին, ել ինչ անենք ես ու դու:

Մենք՝ սամերս, ել ոնց պիտի Մեքքայի կողմը նայենք,  
Երբ առաջնորդն իր աչքը միշտ ուղղում է գինետում:

Մենք ել իր պես գինետա՞նը կմաքրվենք մեղքերից,  
Ի սկզբանն այս է եղել, զուր են աղոթք ու երդում:

Եթե խելքը հասկանար, թե սիրտն ինչքան է երջանիկ,  
Ինքն էլ իսպատ կիսենքանար խոպոպներիդ թակարդում:

Այն օրից, երբ տեսանք դեմքդ- շքեղ այաթ Ղուղանի,  
Այն օրից մենք ուրիշ թավսիր,<sup>53</sup> ուրիշ մի գիրք չենք կարդում:

Քո քար սրտով այս գիշերում կհասկանա՞ս երքսէ,  
Թե ինչու ենք լուսադեմին մենք տանջանար ու արթում:

Լոհիր, Հաֆեզ, սիրո մետը կտրում, աշխարհ է անցնում,  
Խնայիր քեզ ու խոսափիր դու այդ մետից մահաթովս:

Այստեղ թեմաների և դրանցից բխող մոտիվների ընդհանուր ուրվագիծը հետևյալն է.

Կերծ բարեպաշտություն. կրոնի և շարիաթի օրենքների անտեսում. խելքի և սրտի ամենօրյա խոհափիլխոփայական հակադրություն:

Սեր՝ գեղեցկումու նկարագրություն, այդ գեղեցկության հետևանք հանդիսացող տառապանք, քանաստեղծական ինքնագիտակցություն՝ վերջին բելքում գրական կեղծանվան հիշատակումով:

Ողջ դազալը կառուցված է սուֆիզմի տերմինաբանության վրա:

Հոգևոր առաջնորդ (փիր)՝ սուֆիի կատարելագործման դժվարին ճանապարհի ուղևելից:

Սան (մորեղ)՝ հոգևոր ուղու ճամփորդ-աշակերտ:

Գիմետուն (մեխսանե, խարաբայթ-թարիդաթ)՝ Աստծո սիրով արքենալու վայր և հոգու կատարելագործման վիճակ:

Խելք՝ սուֆիի համար անընդումելի ֆենոմեն, քանի որ Աստծո սերը չի տրվում գիտակցության և ճանաչողության:

Սիրտ՝ գիտակցության և սրտի կրոնակիլիստիայական բանավեճի նյութ, որտեղ գիտակցությունը հոգեմարմնական ոլորտում է, իսկ սիրտը՝ մարմնական:

Խելքի և սրտի տրամաբանական գուգորդությունը իր հերթին ձևավորում է մի նոր այլաբանություն՝ սթափություն և արբածություն: Այն գալիս է սուֆիզմի երկու տարբեր դպրոցներից: Բայզանի Բասթամին իր էքստազը համարում է արբածություն (սոքը), իսկ Զումեյդ Բաղդադին՝ սթափություն (սահվ):<sup>54</sup>

Խենթություն՝ Աստծո սիրուց խելագար (այստեղից՝ շատ տարածված սուֆիի նույնականացումը Մաջնումի հետ):

Թակարդ (շղթա, կապանք)՝ անհատական հոգին աստվածային հոգու միացմանը խանգարող ունայն մարմին կամ աշխարհիկ կյանք:

Դեմք՝ աստվածային լուս:

Գիշեր, լուսադեմ՝ հոգեվարժության և տանջածեսի ժամ և ան:

Քնարերգությունը պատմական երևոյթ է: Ինչպիսի ավանդական ձևեր է այն ստանա, միևնույն է, նրա աղթեքը որոշվում է պոետի անհատականության միջով անցած ժամանակի բարքերի խտացմամբ: Այստեղ, կարծում ենք, սուֆիզմի ընդգրկած տերմինաբանությունը դարի ոճն էր և այլաբանության մի խաղ: Հաֆեզի բանաստեղծությունը իր նախորդների նվաճումների թանձրացումն է, ժամանակի բանաստեղծական արվեստի ողջ համալիրը, իսլամական կրոնակիլիստիայական գիտակցության կուտակումը: Այն, Հաֆեզի տաղանդի հետ պատվաստված, մեզ է ներկայանում որպես մի նոր որակ և ամբողջացմում պարսից քմարերգության

միասնականությունը: Սակայն եթե այդ դագալի վրայից հաճախ միատիցիզմի շղարշը, ապա՝ առաջին երկու բեյթը անթաքուց երգիծանք է, ավելի՛ սարկազմ: «Դրսից՝ քահանա, Անրսից՝ սատան» տարրերակն արդեն անկում ապրող սուֆիզմում հոգևոր ուսուցչի իրական կերպարի մի փաստումն է: Հայտնի է, որ 14-րդ դարի սուֆիզմում հոգևոր ուսուցիչ-աշակերտ հումանիստական «քինուշ վերանել էր ավտորիտար ինստիտուտի»:<sup>55</sup> Սա մեզ ծանոթացնում է հաֆեզյան ժամանակաշրջանի բարոյագիտական չափանիշներին (կեղծ բարեւաբարություն) և գեղագիտական արժեքներին (այաթ, թափսիր):

Զարմանալի չեն Ղուրամի բազմաթիվ արձագանքներն ու հիշատակումները (allusion): Նախ՝ Հաֆեզը միջնադարյան պոետ էր և չէր կարող իր մեջ չկրել դարի կրոնական գիտակցությունը, մյուս կողմից՝ նա մանկուց անգիր գիտեր Ղուրամը, որը մշտապես մերենապորեն ուղղորդում էր նրա երևակայությունը: Հենց նրա կեղծանումն էլ գալիս է հիշողություն (հեթզ) բառից:

«Հաֆեզի դագալը սովորաբար թեմաների մի փունջ է՝ միավորված խիստ միջնորդավոր, երբեմն թաքնվող զուգորդական կապերով, որոնք դագալին հաղորդում են որոշակի միասնություն: Միասնություն ոչ թե տրամարանական-ուսցինալ, այլ զգացմունքային միասնություն, տրամադրության միասնություն»:<sup>56</sup>

Նրա Դիվանի առաջին դագալը, որի առաջին տողն արաբերեն է, բազմաթիվ թեմաների մի խուրճ է: Այն համարվում է սուֆիական, եղել և մնում է հետազոտողների քննության նյութ՝ Հաֆեզի Դիվանը կանոնարկող Սուտիից (16-րդ դ.) մինչև մեր օրերը:<sup>57</sup> Միատիկական բովանդակությամբ համերձ, այդ դագալը հաֆեզյան «պոլիթեմատիկ» դագալի դասական նմուշ է, որը բեյթերը բացարձակապես անկախ են (Տե՛ս էջ 57 ծանոթ.76-78):

Հաֆեզյան դագալի այդօրինակ յուրահատկությունը կարելի է համեմատել 20-րդ դ. մոդեռնիստական գրականության ոճերից մեկի հետ, որը կոչվում է «Գիտակցության հոսք»: Գիտակցության մեջ ձևավորված մտքերը, զգացումները, ապրումները, զուգորդությունները հետեւի մասն անընդհատ ընդ-

միջում են իրար և արտաստվոր կերպով միահյուսվում այնպես, ինչպես դա տեղի է ունենալ երազում:<sup>58</sup>

Հաֆեզի ղազալի հենքի վրա ձևավորվող բազմանիստ գուգորդությունների և այլաբանությունների ցանցը, զուգամեռներ ծնող դուրանյան ու դիցաբանական մեջբերումները, այլ բանաստեղծների պոեզիայի արձագանքը, բառախաղերը, ինչպես նաև ուժեղ հաճգը, ռադիֆները,<sup>59</sup> ձայնաներդաշնակությունը, հաճախ ուրիշի ուղղակի խոսքի մուտքը, ժողովրդական լեզուն և դարձվածաբանությունը նրան դնում են ոչ միայն դժվար մեկնաբանվող, այլ նաև դժվար թարգմանվող հեղինակների շարքը:

Լսնք Հաֆեզի ղազալի Աերդաշնակությունը.

Սարվէ չամաճէ ման չէրա մելլէ չաման Շնմիքնադ,

Համդամէ գոլ Շնմիշավադ, յադէ սաման Շնմիքնադ...

\*\*\*

Իմ երկմաճեմ նոճի յարս ինչո՞ւ դաշտում չի լինում,

Վարդի՛ն ընկեր ու հասմիկի՛ն խորհրդասու չի լինում:

Երեկ գիշեր տրտնջացի խոպոպներից իր անսիրտ,

Ասաց՝ «Դե ի՞նչ, սանձել նրանց հոսքը հորդում չի լինում»:

Իսկ իմ սիրտը թեթևամիտ նրանց ցանցում խճճվել,

Այդ խճճված ճամփից նրան ետ թերել տուն չի լինում...

Երկիմաստությունն ակնհայտ է: Տան ճամփան (Աստծո հանգրվանը) կորցնում են նրանք, ովքեր ճշմարիտ նվիրյալ չեն, իրենց հոգում աշխարհիկին տեղ են տալիս: Խոպոպը Աստծո ատրիբուտներից է, ըստ տեսաբանների՝ այն մթությունը, որը քոյի ձևով արարչին անջատում է մարդուց: Ղազալը ուղեկցվում է միատիկական իմաստը պահպանող եզրովյաների մի համալիրով՝ նոճի, վարդ, սեթնեթանք, սիրտ, հոնք ևն:

Միստիկական տրամաբանություն է ատացել նաև վարդի և սոխակի ապերչամիկ պատմությունը, որ մարդկային և աստվածային սիրո սուֆիկան մողելի արձագանքն է. Վարդը այդ գեղեցկության արտացոլումն է, իսկ սոխակը՝ հարատևորեն նրան ձգտողը:

Բլրուզն վարդին էր սիրահար, իսկ վարդը յարն էր փշի.  
Ու երեքն էլ տառապում են ու չեն հասնում միմյանց:

Սակայն մի՞թեն այդ եզրերը միայն թաքնված՝ երկրորդ  
իմաստի նշան են: Ինչո՞ւ մտածել, որ դարերի խորքից եկող  
պատկերների լեզուն միայն մտքերը թաքցնելու համար է:  
Այն էլ այն բանաստեղծի արվեստում, ում կենաագործունից  
հայտնի է, որ նա իր ստեղծագործական կյանքը չի համա-  
տեղել կրոնակիհիսոփական գործունեության հետ:

Անկախ բոլոր մեկնաբանություններից և միստիցիզմի որո-  
նումներից՝ «Դաշտավայր Անճի» դազալում մենք ակնհայտորեն  
խաղ, կատակ, հումոր, հեգմանք, սրամություն, կենցաղային  
զվարճակի իրավիճակ ենք տեսնում, սեփական տաղանդի,  
խոսքի վարպետության, պատկերի ճկունության ցուցադրում:

Հաֆեզի ոճը նրանքաշակ և ծեքծեքուն է՝ հեռացած նախ-  
կին, խորասանյան կոչվող պարզ ոճից: Այն կոչվում է իրա-  
քյան, որի առանձնահատկություններից մեկը բարդացումն է:

Հաֆեզի դազալի բազմապիսի հարցադրումները կամ  
որևէ կերպ խարսխվում են սիրո թեմային, կամ էլ բեկվում  
են նրա մեջ:

Արավասիկ հաֆեզյան շարժուն սիրավին պատկերներից  
մեկը.

Ծիծաղադեմ ու հերարձակ, ու աչքերը՝ գինովցած,  
Գավը՝ ձեռքին խինդը՝ շուրթին, լուսաշաղախ, կրծքարաց,

Հպացքի մեջ՝ կանչող կայծեր ու հեգմախառն մի ժպիտ,  
Կեսարիշերին եկավ-կանգնեց զիսավերևս հանկարծ:

Գլուխն ինչպես ամպիովանի, նա ինձ վրա խոնարհեց,  
«Խենթ սիրահար, ես այսուեղ եմ, իսկ դու քնա՞ծ ես», -ասաց:

Եթեն այսօրինակ դազալների վրայից հանենք հնարավոր  
միասիկական կաղապարը, ապա կունամենք, •որ թվարկված  
մանրապատումները քաղաքային էմանսիպացիայի հրաշալի  
արտահայտություն են, ազատախորհության ցուց, միջնադա-  
րյան կնաղացությանը՝ մարտամրիավեր: Էլ չենք խոսում այն

մասին, որ գեղեցկութու «վարքը» դուրս է մահմերական բարոյագիտության սահմաններից: Անկարենի է չնիշել Քուչակի հայտնի հայրենը.

Այս ծով, անատակ գիշերս ի բու՛՛  
Ես երկու շրջան մամեցի.  
Խոշ եարս այլ ի միտս ընկաւ,  
Թէզ մ'ելայ, զջամրաս վերուցի,  
Փառչիկ մ'այլ ամուշ գիճի,  
Խոշ եարիս դրուն գնացի.  
-Խոշ եար, ա՛մ, զդուողդ բաց,  
Զիւն եկեր, ոտիս կու մըսի:<sup>60</sup>

Սերեսը, որ համաշխարհային պատմագրության մեջ առաջինն էր, որ տեղեկացրեց Մոհամադի և նրա քարոզմերի մասին, գրում է. «...Մահմետը օրենսդրեց չուտել լև, չխմել գիճի, չխոսել սուս, չանել պոռմկություն»<sup>61</sup>: Ի՞նչ արմատներից էր սմվում իսլամական քաղաքակրթության հողի վյու ձևավորված Հաֆեզի ձգտումն ու սերը գիճու, խոպոյի, պանդոկի, գիշերային խրախճանքների, գիճարբուքի, անկարգ և թափառական ունենի կերպարի նկատմամբ: Եթեն այդ ամենը սուֆիական-միստիկական մորքելի կող չէր, ուղեմմ՝ ըմբռոստության, հակադրության, իրականությանը ձեռնոց նետելու մի միջոց էր: Խակ գուցե միջնադարյան պերճախոսության արվեստի քարացած կանոնները էին կողմնորոշում բանաստեղծին. ավանդական թեմաները, կայուն կաղապարները, պատկերները և ձևանուշները, հնքանկա զուգորդությունների շղթան, ողոնց վրա հզոր անհատականությունները ստեղծում էին նորը: Լաենք ինչ եմ ասում միջնադարյան պոետիկայի գիտակները: Նիզամի Արրուզի Սամարդանդին (12-րդ դ.) հաղողորում է, որ առեզրիայի արվեստում ոչ մեկը չէր կարող հասնել կատարելության, մինչև անգիր չիմանար 20.000 տող իր նախորդների և 10.000<sup>o</sup> իր ժամանակակիցների բանաստեղծություններից<sup>62</sup>: Խակ Ռաշիդ ադ Դին Վաթվաթը (12-րդ դ.) պոետիկայի խմելիրներին նվիրված իր երկասիրության մեջ գրում է, թե սեփական իմաստահրական մորքերը, խրատական ու ուսուցանող հորդորները, ինչպես նաև ճակատագրից

և ժամանակից դժգոհությունն ու բողոքը գեղարվեստական արտահայտչամիջոցներ են և կոչվում են միավորող խոսք (այլ քայլամ ալ ջամի):<sup>63</sup> Ահա որտեղից է անվում Հաֆեզի հանճարը:

Գինին առեղծված է՝ իր մեջ կուտակած արքեցնող, մոռացնող, բուժող, զվարթացնող, նաև մարդկանց հավասարեցնող հատկություններով: Անզիացի գրող Հ. Չեսեղթյունը իր «Օմար Խայամ և սուրբ գինի» էսեում գրում է. «Խմեք ուրախությունից և երբեք՝ վշտից»: Չեսեղթյունյան հումորով և լայն ընդհանրացմամբ<sup>64</sup> նա խայամյան սկեպտիկ, «անուրախ» գինուն հակադրում է երջանիկը՝ կենսահաստատումը:

Սակայն իրականում մարդուն գինուն հանձնող բոլոր տեսակ տրամադրությունները սնվում են նոյն արմատից, որ կոչվում է «Ունայնություն».

Արի ու տես, որ մեր հովսի քերդն անկայուն է այնքան,  
Գիմի տուր ինձ, այս կյանքի մեջ ոչիմչ չկա անսասան:

«Մենք տեսք ենք անում, իբրև մեր կյանքը հուսափի հիմք ունի և ուշադրություն չենք դարձնում մեզ հետապնդող անհանգստությանը, տագնապին և շփոթությանը»:<sup>65</sup> Սա բոլորովին էլ Հաֆեզի մտքերի արդիականացումը չէ, որ գտնում ենք նրանից 600 տարի հետո սթրեսների պատճառը որոնող Զ. Ֆուլյոյի աշակերտ Էրիխ Ֆրումի մոտ:

### Հաֆեզ.

Հսիր խոսքս, միտքդ պահիր ու փոխանցիր ամենքին,  
Այդ խոսքը ծեր մի իմաստուն ինձ պատգամեց մի անգամ:

Մի տրտնջա, որ աշխարհը քեզ ուզածդ չի տալիս,  
Քանզի դու չես որոշողը աշխարհի կամ ու չկան:

Գոհացիր քո ունեցածով, դա՞ է կամքը բարձրյալի,  
Գիտցիր, և ի՞ս, և քո՛ առջև փակ է դուռը ընտրության:

Մի՛ պահանջիր, որ ընկերդ հավաստարիմ մնա քեզ,  
Ծեր հարսնացու է աշխարհը, փոփոխվում է միշտ փեսան:

Այս դազալի հմաստն ու գեղագիտությունը ձևավորվում է դուրանյան և մերձուրանյան թեմաների վրա (Տե՛ս էջ 63, ծանոթ. 86-89). Իրեշտակի խոսքը, երկնային գարը, պատկերը, ունեցածով գոհանալու գաղափարը, որ մերձակից է Սուրբամադի «իմ աղքատությունն իմ հպարտությունն է» հայտնի հաղիսին: Առկա է ճակատագիրը Յութականացմելու երևույթը և դրա միջուկը ուսուցողական զուգորդությունների շղթան: Ղազալի մի քանի բերթի ընդգծված բարոյագիտությունն ունի հետևյալ կառուցքը. առաջին տողում խրատ և հորդոր, իսկ երկրորդում խտացված ընդհանրացում աֆորիզմ:

Ընդգծված սոցիալական բողոքը, ժամանակի անթաքույց արձագանքը մի նոր՝ քաղաքացիական քնարերգության երանգ տվեց Հաֆեզի դազալին:

Միրողների էլ չեմ տեսնում, շողն ու սերը ի՞նչ եղան  
Ընկերության վերջը եկա՞վ, ընկերները ի՞նչ եղան:

Կենաց ջրերը ցամքեցի՞ն, կորա՞վ լուսի մարգարեն,  
Վարդի սրտից արյուն կայեց, գարնան ամպերն ի՞նչ եղան:

Ոչ ոք, ավա՞ն, չի հարցնում ճիշտն ու սուտը ընկերոջ,  
Ծշմարտախոսն ի՞նչ օրն ընկավ, ազնիվ բարքերն ի՞նչ եղան:

Ինչ ճիգ ու ջանք էլ գործադրենք, միևնույն է, այս նմուշ-ները կը նոդիմանան ամեն տեսակ միաստիցիզմի, հնազանդության, հարմարվողության, ինչ կտրվածքով էլ վերլուծենք, կմնան որպես խոռվք, որպես դրամա, որպես անցյալի կարոտախտ: Այս դազալը նույնական առանց Ղուրանի և մերձուրուանյան թեմաների գիտության կորցնում է իր խորքը և բազմիմաստ զուգահեռները (Տե՛ս էջ 78, ծանոթ. 96, 99, 100, 101):

Հաֆեզի արվեստը պարսից պոեզիայի ավանդույթների կուտակման մի պոտքիւմ է: Վաղուց ուստմասիրված է Հաֆեզի ազդեցությունը իր նախորդներից, ինչպես նաև ազդեցությունը իր ժամանակակիցների և հետմորդների ոճի կայացման վրա: Ի դեպ, «ազդեցություն» կոչվածն էլ պարսից

պոետիկայի օրենքներում ոչ միայն թուլատրելի էր, այլ նաև խրախուսելի: Այն մեծ տատանում ուներ. կարող էր լինել պատասխան, ռնապատճենում, նմանակում ևն: Միջնադարյան պոետիկայի տեսաբան Ար-Ռադրուզանին գրում է, որ բանաստեղծը մեկ ուրիշի բելով կարող է տեղադրել իր ստեղծագործության մեջ, որը հարգանքի դրսւորում է և ոչ թե լուրացնելու ցանկություն<sup>66</sup>:

Կրկին վերադառնաք մոմի և ցայգաթիթեռի տարածված և սիրված պատկերին: Այն ունի հաստատուն ավանդույթ և գալիս է դեռևս 10-11-րդ դդ.:<sup>67</sup>

Բազմաթիվ պոետներ անդրադարձել են այդ թեմային՝ ամեն մեկը լուրովի ծառայեցնելով այն իր նպատակին:

Արցունական բանաստեղծ Մոնզայի Դիվանում պահպանվել է հետաքրքիր մի քաղակ.

Եթեն դու ես լուսինն ու մոմն այս աշխարհում,  
Ինչի՞ն է իմ ազրում-հատնումն այս աշխարհում.

Թեն դու' ես մոմն - ինչո՞ւ եմ ես այսպես այրվում,  
Թեն լուսին ես' ինչո՞ւ եմ ե՞ս, ե՞ս փոքրանում:<sup>68</sup>

13-րդ դ. խրատաբան բանաստեղծ Սաադին իր «Բուրթանում» մոմի տիտուր մի պատկեր ունի.

Գիշեր է խոր, չեմ մոռանում, քում չի գալիս իմ աշքերին,  
Թովուում է թիթեռը թուլ և ասում է մեղրամումին.

Սիրահար եմ քո թեժ բոցին և վառվում եմ ես նրա մեջ,  
Դու ինչո՞ւ ես այդպես այրվում և արտասպում այդպես անվերջ:  
Եվ ասում է մոմը նրան- ով մոլորված իմ մրցակից,  
Բաժանեցին ինձ իմ սիրած, իմ քաղցրահամ մեղրահացից:

Ծանոթ չեմ քեզ վիշտը սիրո, սիրո հուրը հավերժական,  
Գեղ մի վայրկյան կանգ առնելու համբերություն չունես անգամ:  
Բոցից թղած ամեն կացից, փախչում ես դու թեկին տալով,  
Ես կանգնում եմ, մինչև այրվեմ ու վերջանամ արտասպելով:

Թե իմ սիրո կրակը թե՛մ լոկ թներն է այրել քո թուխ,  
Տես, ինձ այրել ամբողջովին խորովել է ոտից-գլուխ:

Ծով մի մտիր, զգուշացիր ալիքներից դու մոլեգին,  
Իսկ թե մտար, կյանքը համձնիր մրրիկներին ու տարերքին:

Ասում էր մոմն արտասվերով՝ թիթեռմիկին տագմապահար,  
Եվ արցունքներն էին հոսում նրա դալուկ այտերն ի վար:<sup>69</sup>

### Հաֆեզ

Օր ու գիշեր քուն չի գալիս իմ վշտակեզ աչքերին,  
Քեզնից բաժան՝ օր ու գիշեր արտասվում եմ, ինչպես մոմ:

Համբերանքիս թեղը կտրեց վշտի մկրատը անգութ,  
Քո անթեղած կրակներից ես այրվում եմ, ինչպես մոմ:

Ո՞վ կիմանար իմ գաղտնիքը, եթե արցունք չթափեր,  
Չրոցկլտար, սեր չառկայծեր իմ արցունքը, ինչպես մոմ:

Սրտիս պատրույգը բարակել, հյուծվել է քեզ տենչալուց,  
Մեր բաժանման մորմոքներից հալիլում եմ, ինչպես մոմ:

Թե մինչև լուս ինձ փարվանան լուր չքերի հաշտության,  
Հրի կտամ ես աշխարհի հիմն ու սղունք, ինչպես մոմ...

Ընդհանրապես մոմի փոխաբերությունը անմիջապես տաս-  
նյակ ակնճայտ զուգորդություններ է ձևավորում, որոնցից  
առաջինը լուսի գաղափարն է: Հետո գալիս են մոմի այն  
հատկանիշները, որոնք ծնում են ցավային-ֆիզիկական զգա-  
ցումներ՝ այրվել, մաշվել, հալվել, մտոնել, լաց լինել, դեղին  
ունմք ունենալ (տանջվել), փափկել ու ճկվել, սևադրությունը  
(պատրույգ) ևա: Սակայն մեր ընկալմամբ, գուցե սուբյեկտիվ՝  
այդ ամենից վեր բարձրանում է գորշության մեջ պայծառ,  
սակայն տիսուր մենության գաղափարը:

15-րդ դարի պարսից մատենագիր Դովլաթշահ Սամար-  
դանդին մի թետաքրքիր տեղեկություն է հաղորդում Հաֆեզի  
Ժամանակակից, աղքումական բանաստեղծ Սալման Սավազի

մասին: Մի անգամ սովորանական տաճ գիշերային խրախ-  
ճանքից հետո Սավաջը տուն է վերադառնում ծառայի ուղե-  
կցութամբ, որի ձեռքին մոմ էր՝ ոսկե մոմակալի մեջ: Տեղ  
հասնելուն պես Սավաջը ծառայից վերցնում է այն և մտնում  
տուն: Երբ հաջորդ օրը ծառան գալիս է մոմակալի ետևից,  
Սավաջը մոմակալի փոխարեն սովորանին մի բանաստեղծու-  
թյուն է ուղարկում, որի մուտքը այսպիսին է.

Իր կրակու արցունքների վտակներից այրվեց մոմը երեկ գիշեր,  
Այսօր էլ ես ինքս կայրվեմ մոմի նման, թե սովորանը

մոմակալը եւռ ուզի:<sup>70</sup>

Այս զավեշտական պատմությունը ցույց է տալիս, որ Ար-  
քանաշակ բանաստեղծական պատկերների խաղը հաճախ  
ենթարկվում էր պահի և Բոգելիճակի տրամաբանությամբ.  
Միշոցները նպատակին ծառայեցնելու ցանկությամբ:

Մի բազմախորհուրդ այլաբանության քննությամբ տես-  
ւունք «ավանդույթ» կոչվածի կայունությունն ու տարափոխու-  
թյունը (transformatio):

Ամա Սաադիի խոսքը՝ իրեն բնորոշ խրատական հենքով.

Ծով մի մտիր, զգուշացիր ալիքներից դու մոլեգի՛,  
Իսկ թե մտար, կյանքը հանձնիր մրրիկներին ու տարերքին:

Ամավասիկ Հաֆեզը՝ ժամանակի բարքերի թաքնված քն-  
նադատությամբ.

Գիշերը՝ մութ, ծովը՝ անգութ, մեմք՝ փոթորկի բերանում,  
Այս վիճակը ո՞նց հասկացնես ափին նստած անհոգին...

Եվ 20-րդ դ. պարսից Արք՝ անհանգ բանաստեղծության  
հիմնադիր Նիմա Յուշիջը.

Ով մարդիկ, որ նստել եք ափին զվարի ու երշամիկ,  
Մեկը զոհվում է ջրում.

**Մեկը ձեռք ու ոտքը թափահարում է (օգնության կանչով)**  
**Այս մոլոր ահարկու և դաժան ծովում...?!**

Այս է այն կենսունակ հողը, որի վրա մերձենում են ճշմարիտ արժեքները դարից դար փոխանցող պոետները:

Այսօր Հաֆեզի պոեզիան նույնքան առեղծվածային է, որպան 700 տարի առաջ՝ իր կենդամության օրոք: Այդ խորի «գաղտնիքների» որոնումներում նա հնչում է աշխարհի բազմաթիվ լեզուներով և միավորում ողջ մարդկությանը:

Այս ծաղկաբաղի նոր թարգմանությունները՝ ուղեկից վերլուծությամբ, չեն հավակնում պատասխան տալ պարսից գրականության երկու մեծությունների՝ Զալալ առ Ռին Ռումիի և Հաֆեզի պոեզիայի բոլոր հարցերին: Սա մի փորձ է՝ լուսաբանելու հրանց բանաստեղծական արվեստի մի հիստոր, մեկ անգամ ևս առնչվելու համամարդկային արժեքներին:

Թող ամեն մեկը գտնի Ռումիի և Հաֆեզի պոեզիան ընկալելու ի՞ր բանալին: Հենց դրանում է հանճարների հավերժության առեղծվածը:

**Բանասիրական գիտությունների դրվագ**  
**Արմանուշ Կողմոյան**





Զալալ առ Դին  
Ուսւացի





Երանելի էր այն պահը, երբ մենք՝ փարված իրարու,  
Երկու պատկեր, բայց թե հոգով մենք մենք էինք-ես ու դու:

Այգու բերքը, հավքի երգը անմահություն էր բերում,  
Պարտեզի մեջ մենք էլ ասես մի երգ էինք- ես ու դու:

Աստղերն ամեն մեր շուրջն էին, ու մենք՝ լուսին նրանց մեջ,  
Աստղերի հետ աստղերի պես բերկում էինք- ես ու դու:

Առանց «եսի», առանց «դուի», ձուլված էինք, վերացած,  
Հեռու, հեռու, ասես ուրիշ երկում էինք- ես ու դու:

Թոշունները ուրախության երգեր էին գեղգեղում,  
Ու նրանց հետ ասես մենք էլ երգում էինք- ես ու դու:

Բայց, ո՞վ զարմանք, երբ մենք իրար գրկում էինք այս պահին,  
Ես իրաքում էի, իսկ դու՝ Խորասանում- ես ու դու...<sup>72</sup>:



Կեցցե սերը, կեցցե սերը, որ մեր սերն է, ո՞վ Աստված,  
ինչ հրաշք է, և ի՞նչ բախտ է, որ նա մերն է, ո՞վ Աստված:

Ինչքան ջերմ ենք, ինչքան ջերմ ենք, սիրո արևն է մեր մեջ,  
Մերթ գաղտնի ենք ու մերթ բաց ենք, սիրո տերն ենք, ո՞վ Աստված:

Կեցցե լուսը ու լուսինը, կեցցե գիճին սրտակից,  
Գիճին զարդ է, գիճին մարմնի կենսաբերն է, ո՞վ Աստված:

Կեցցե հուսը, կեցցե հույզը, որ աշխարհներ է լցնում,  
Սերը ծանր, բայց և անուշ, քաղցր բեռ է, ո՞վ Աստված:

Խորտակեցեք պալատները արքաների ուրացող,  
Կեցցե փոշին, կեցցե փոշին և ավերը, ո՞վ Աստված:

Ե՛կ խոնարհվենք, ե՛կ խոնարհվենք սիրո առջև և Աստծո,  
Ուզը՝ ունայն, սերն ամենից բարձր ու վեր է, ո՞վ Աստված:

Ամեն կողմից, ամեն կողմից թուխա-թախիծն է թաճճանում,  
Սև ձանձրույթը ծանրացրել է մեր թները, ո՞վ Աստված:

Վանդակում չենք, ել ինչու՞ ենք գամվել-կպել այս կյանքին,  
Ի՞նչ շղթա է, որ ցանցել է մեր ոտքերը, ո՞վ Աստված:

Ամբավատի մուր խարանն է հոգիներում դրոշմվել,  
Այդ խարանը քեզ մեզանից օտարել է, ո՞վ Աստված:

Լոեք, լոեք, որ չբացեք թաքուն հրաշքը սիրո,<sup>73</sup>  
Որ հրաշքին չտիրանան օտարները, ո՞վ Աստված:



Մեռեք, մեռեք ու մահացեք սիրով արբած, սիրո մեջ,  
Սիրով արբած մահամալը երանություն է անշեց:

Մեռեք, մեռեք ու մահացեք, մի վախեցեք այս մահից,  
Պոկվեք հողից ու կակսի կյանքը անդորր ու անվեճ:

Մեռեք, մեռեք ու մահացեք, փախեք նյութից ու կրծից,  
Նյութ ու կրծի կապամքներում հոգին գերի է ու խեղճ:

Քլունգն առեք ու խորտակեք զնդանները մարմնավոր,  
Թե խորտակեք, արքա եք դուք ու շահնշան եք մի պերճ:

Մեռեք, մեռեք ու վեր ճախրեք, դարձեք լուսին մաքրափայլ,  
Ալմժամ կզգաք, թե ներքնում կյանքն ինչքան է սմամեց:

Մեռեք, մեռեք ու բարձրացեք կատարյալի տենչանքով,  
Ու կդառնաք դուք կատարյալ, Աստծուն մոտիկ, աստծուն՝ մերճ:

Օ, լոեցեք, լուրջան մեջ մահն է հանդարտ մոտենում,  
Աղմուկները ձեզ չեն թողնում աստծուն ձուլվել մինչև վերջ:



Մեկը եկել ու լնկերոջ դուռը ծնծում է փութեկոտ,  
Ներսից ասին - «դու ո՞վ ես, որ կանգնել այս դռան մոտ»:

«Ես եմ»-եղավ պատասխանը. Աերսից ասին «Ես գնա,  
Քեզ պես խակը դեռ արժան չե՛ իմ սեղանին հյուր դառնա»:

Տիաս սիրտը բաժանվելուց, տառապելուց է թրծվում,  
Թե՛ չէ սիրո կեղծն ու ճիշտը ո՞նց հասկանա աշխարհում:

Գնաց խեղճը ու թափառեց, անցավ գյուղ ու քաղաքով,  
Այրվեց վառվեց ու կարոտեց բաժանումի կրակով:

Այրվեց վառվեց ու կարոտեց, թրծեց հոգին ցավի մեջ,  
Ու ետ եկավ նոյն դռան մոտ ու նոյն դռանը կանգնեց:

Տագնապում էր՝ թե երբ բացվի Աերսից փակը դարպասի,  
Հանկարծ նորից չվրիահի, նորից միաւ խորք չասի:

Ներսից հնչեց նոյն հարցումը -«ո՞վ ես, ի՞նչ ես, ո՞վ անցորդ»,  
«Դու ես,- եղավ պատասխանը,-դու ես կանգնել դռան մոտ»:

«Եթե ես եմ,-լսվեց Աերսից,-ու ես էլ դու ես, ապա  
Մեկ հոգի ենք, թե չէ տանս երկու հոգու տեղ չկա:

Ասեղի մեղ անցքով երկու թել անց կացնել չփորձես,  
Քանի որ մենք մեկ ենք արդեն, այդ մեղ անցքով արի Աերս»:



Երբ որ դագաղս ճանապարհ ընկնի դեպի շիրմատուն,  
Ոչ, դու մի՛ կարծիր, որ տխուր եմ ես, դժբախտ ու տրտում:

Ինձ համար մի լա, մի ողբա անհույս, մի ասա «ափսոս»,  
Ափսոսը դու ես, որ չար դեկրից չունես ազատում:

Երբ շիրիմ իջնեմ, դու մի մորմոքա, թէ անցա անհետ,  
Ինձ սպասում է մի գերերջանիկ վերին հանդիպում:

Իմ հողաթմբին մնաս բարովի խոսքեր մի ասա,  
Քանի որ նորից իրար կտեսնենք վերը՝ դրախտում:

Երբ հողում սուզվեմ, իմ համբարձվելը դու պատկերացրու,  
Արևամուտին արևագալ է անվերջ հաջորդում:

Քեզ թվում է, թէ ես մայր եմ մտնում, ո՞չ, ծագում եմ ես,  
Քեզ գերեզմանը մի բանտ է թվում, ինձ՝ թևարձակում:

Այն ո՞ր հատիկն է՝ հողին ընկնելիս չի ծլում նորից,  
Մարդ-հատիկն էլ է հողից դուրս գալիս ու նորից ծաղկում:

Ո՞ր դուլն է իշել ջրիոր ու լիքը չի վերադարձել  
Հովսեփին հանում ջրիորից, ապա՝ արքա են կարգում<sup>74</sup>:

Եթէ բերանդ փակ է այս կյանքում, բացվում է այնտեղ,  
Քանի որ ձայնը անհունի մեջ է խոր արձագանքում:

## Հատված «Առեղծվածայնի մասին» պոեմից<sup>75</sup>

### Սրինգի երգը

Ականջ դրեք դուք սրինգին, տեսեք, թե ինչ է ասում,  
Նա բաժանման իր մորմոքից, իր ցավերից է խոսում:

Թե՛ այն օրը, երբ ինձ իմ մայր նղեգնուաից կտրեցին,  
Կին, տղամարդ, ծեր ու մանուկ ինձ հետ իմ վիշտը լացին:

Հիմա էլ ես սիրտ եմ փնտրում՝ վառված այդ նոյն կրակից,  
Որ պատմեմ իմ ցավը նրան, որ դառնա ինձ կարեկից:

Ամեն էակ, որ արմատից պոկված, ընկած է հեռու,  
Ուր էլ գնա, վերադարձի պահն է անվերջ փնտրելու:

Ես, սրինգս, որ ամենքին ձայնակցում եմ խնջուքում,  
Զույգն եմ դառնում ես ամենքի, խնդում եմ ու մորմոքում:

Ամեն մեկն ինձ համարում է սրտակիցը իր վշտի,  
Սակայն ոչ ոք իմ խորքերում այրվող վիշտը չգիտի:

Ոչ ոք, ոչ ոք չի թափանցում շերտերի մեջ իմ ներսի,  
Թափանցի' էլ, նա հասու չէ գաղտնիքներին իմ լուսի:

Իրավ է, որ հոգին մարմնին խառնված է մշտապես,  
Բայց մարմինը նյութեղն է, հոգին վսեմ է ու վես:

Սրինգի ողբը կրակ է, ոչ թե քամի անխորհուրդ,  
Ով անմասն է այդ կրակից, ապրելն իր զուր է ու սուտ.:

Կրակը՝ սերն աստվածային շունչ է տալիս սրինգին,  
Սերը, ինչպես եռքը գինու, հասունացնում է հոգին:

Սրինգն ընկերն է այն մարդու, ով որ յարից վերք ունի,  
Նա պատում է սիրտը ծածկող վարագույրները գաղտնի:

Սրինգը և թուղն է տալիս և տալիս է հակառուցն,  
Նա սրտերին նինջ է բերում, բայցն պահում է արթուն:

Նա պատմում է սիրո ճամփի տառապանքներն անհամար,  
Նա Մեջնունի սերն է պատմում, որ անցնում է դարից դար:

Ողջույն քեզ, սե՞ր, դու մեր հրաշք, հրաշալի մեր տենչանք,  
Դու բժիշկն ես մեր թուլության և մեր ուժին՝ ներշնչանք:

Սթափեցնող սպեղանի՝ երբ մեծամիտ ենք ու չոր,  
Դու՝ Պլատոն, դու՝ Գալենոս՝ իմաստության մեզ կոչող:

Ու շուրթերս իմ սիրելու տաք շուրթերին թե հանգչեն,  
Ես էլ այնձամ սրինգի պես կգեղգեղամ, կհնչեմ:

Արդ, լսեցեք, բարեկամներ, պատմությունը սրինգի,  
Դա ճշմարիտ ցոլացումն է սիրատոչոր մեր կյանքի:



لِمَاتِي





Բե՛ր, մատովակ, բեր գավերը, տրվենք գինու տարերքին,  
Սերը, որ ինձ լուս էր թվում, մթագնել է իմ հոգին:<sup>76</sup>

Զկա մի սիրտ, որ չարյունի քո մազերից մշկաբույր,  
Բույրդ է փովել աշխարհով մեկ առավոտ վաղ, լուսայգին:

Ա՞յս, ես ինչպես արբեմ սիրով, երբ ամեն պահ ինձ կանչում,  
Քարավանի զանգն ինձ տանում, մոտեցնում է երկնքին:<sup>77</sup>

Ներկիր գինով գորգն աղոթքի, լսիր ծերին իմաստուն,  
Թե ճամփորդ ես՝ տեղյակ եղիր ճամփի կարգ ու օրենքին:<sup>78</sup>

Գիշերը՝ մութ, ծովը՝ անգութ, մենք՝ փոթորկի բերանում,  
Այս վիճակը ո՞նց հասկացնես ափին նստած անհոգին:

Գոռողությունը ի վերջո վատի համբավ ինձ բերեց,  
Ինչպես ծածկեմ, երբ ամենքը տեղյակ են իմ գաղտնիքին:

Թե մոտեցել ես աստծուն, Հաֆե՛զ, ել մի՛ հեռանա,  
Ու թե հասնես՝ խաղաղ արտով հրաժեշտ տուր աշխարհքին:



Թե Ծիրազի փերու փայլից սիրուս բոցերը հուրիրան՝  
իր մի խալի համար կտամ Սամարդանդը և Բոլսարան:

Բե՛ր, մատովակ, խմեմ գիճին: Դրախտն ի՞նչ է, երբ աշքիս դեմ  
Վարդաստաններն են Ծիրազի, Ռուբաբանդն է և Մոսալլան<sup>79</sup>:

Հե՛յ, գնչուներ, բիրտ աղմուկով համբերանքս այնպես տարաք,  
ինչպես թուրքերն են թալանում քեֆի սեղանն առատության:

Երբ Զոլեյխան հանկարծ տեսավ գեղեցկությունը Հովսեփի,  
Նա էլ ցնցվեց սիրո ուժից, նետեց քողը պարկեշտության<sup>80</sup>:

Յարի թուքը մեր ամկատար երգ ու գովքին կարիք չունի.  
Երբ անթերի է գեղութին, ներկ ու սնգույր պետք չէ նրան:

Դառը խոսքն էլ քաղցրանում է, երբ հնչում է շաքար շուրթից,  
Վատն էլ խոսեա բերկրանք է ինձ, միայն խոսիր, խոսի՛ր միայն:

Զա՛նս, լսիր իմ հորդորը ու հաղորդիր շահելներին,  
Իմաստունի ասած խոսքը հարկ է անցնի բերնե-բերան:

Խոսիր գինուց, երգից, խիճից ու մի փնտրիր խորքը գոյի,  
Ոչ ոք դեռ չի բացել կյանքի առեղծվածը հավերժական:

Հաֆե՛զ, դու քո տաղը ասա, քո մարգարիտ բառը շարիր,  
Որ երկինքը տաղդ ցողի-աստղաբուլե՛ր փոփ վրան:



Գինետնից մզկիթ եկավ մեր առաջնորդը հոգու,  
Երբ առաջնորդն է այսպիսին, և ի՞նչ անենք ես ու դու:

Մենք, սաներս, և ոնց պիտի Մեքքայի կողմը նայենք,  
Երբ առաջնորդն իր աշքը միշտ ուղղում է գինետուն:

Մենք և իր պես գինետա՛նը կմաքրվենք մեղերից,  
Ի սկզբանե այս է եղել, զուր են աղոթք ու երդում:

Եթե խնդքը հասկանար, թե սիրտն ինչքան է երջանիկ,  
Ինքն էլ իսպառ կիմենթանար խոպոպերիդ թակարդում:

Այն օրից, երբ տեսանք դեմքդ- շքեղ այաթ Ղուրանի,  
Այն օրից մենք ուրիշ թա ֆսիր, ուրիշ մի գիրք չենք կարդում:<sup>81</sup>

Քո քար սրտով այս գիշերում կհասկանա՞ս երեկէ,  
Թե ինչու ենք լուսադեմին մենք տանջահար ու արթուն:

Լոի՛ր Հաֆեզ, սիրո մետը կտրում, աշխարհ է անցնում,  
Խնայիր քեզ ու խոսափիր դու այդ մետից մահաթույն:



Միծաղադեմ ու Բերարձակ, ու աչքերը՝ գինովցած,  
Գավը՝ ձեռքին, խիճդը, շուրթին, լուսաշաղախ, կրծքաբաց,

Հայացքի մեջ՝ կանչող կայծեր ու Բեգնախառն մի ժպիտ,  
Կեսգիշերին եկավ-կանգնեց գլխավերնս համկարծ:

Գլուխն ինչպես ամպիովանի, նա ինձ վրա խոնարհեց,  
«Խենթ սիրահար, ես այստեղ եմ, իսկ դու քամ՞ծ ես», -ասաց:

Սիսիրահարը, որին լուսեղ գավ են տալիս արքեցման,  
Կույր անհավատ պիտի լինի, որ չխմի խենթացած:

Ո՞վ քարոզիչ, խմողներին մի՛ այպանիր, քանի որ,  
Ի սկզբանե մեզ աշխարհում սոսկ այս նվերն է տրված:

Լինի գիճի դրախտային թե գինետան թունդ գիճի,  
Խմում ենք, ինչ մեր գավի մեջ լցնում-տալիս է Աստված<sup>82</sup>:

Գիճու խաղերն էին ու խիտ խոպոպները գեղուիու,  
Որ Հաֆեզին դարձրեցին երդմնազանց, պարտազանց...



Թենու գինին բարեքեր է, ու քամին էլ՝ ծաղկասփյուռ,  
Թաքուն խմիր, մոհթասերը հսկող աշքեր ունի բյուր:<sup>83</sup>

Եթե ձեռքիդ գինու կուժն է, շուրջդ՝ ընկեր-բարեկամ,  
Խելքով խմիր, ժամանակը խիստ խառնակ է, անմաքուր:

Քուրձիդ թևի մեջ թաքցրու գավն ու գավաթը գինու,  
Ժամանակը արյունոտ է ու արյունն է դարձել ջուր:

Արցունքներով լվանք գինու հետքը քուրձի վրայից,  
Եկել է ժամը ճգնության, չընդիմանանք էլ իզուր:

Մի որոնիր ճշմարիտ սեր դու այս շրջված երկնի տակ,  
Երբ անարատ գինուն անվերջ խառնում են տիղմ ու մրուր:

Երկնակամարդ մի մաղ է, որ միշտ արյուն է մաղում,<sup>84</sup>  
Կաթիլները՝ արքաների գլուխմերն են մահաբույր:

Իրաքն ու Ֆարսը գերեցիր քո քերթությամբ, ո՛վ Հաֆեզ,  
Փառքդ հասավ Բաղդադ, Թավշիկ ու զնգում է ամենուր:



Ո՞վ քարոզիչ, գնա գործիդ, ի՞նչ ես գոռում-գոռգոռում.  
Սիրտս ճամփան է կորցրել, իսկ դու այդ ի՞նչ ես փնտրում:

Այն ամենից, ինչ աշխարհում արարել է մեծն Աստված,<sup>85</sup>  
Մի վայրկյան կա, որ Աստծու քննությանը չի տրվում:

Մի վայրկյան կա, որ կախված է քո շուրթերից շաքարե,  
Դրանից դուրս ամեն խրատ ինձ լոկ քամի է թվում:

Քո թաղի հետ ես չեմ փոխի ութ դրախտը երկնքի,  
Ես՝ մերժողս ամեն կապանք, տե՛ս, գերին եմ քո սիրուն:

Թեև համբավն հարրեցողի իմ անունը ավիրեց,  
Սակայն հենց այդ ավերից է երգիս արմատը սնվում:

Սիրտ իմ, մի՛ լար յարի տված ցավից՝ թեկուզ անարդար,  
Լիացիր քո բաժին սիրուց ու մի եղիր աններում:

Գնա՛, Հաֆեզ, ու մի պատմիր սուտն ու ճիշտդ ամենքին,  
Կյանքը լի է ցավ ու խինդի եղաջով անդադրում...



Արի ու տես, որ մեր հույսի բերդն անկալուն է այնքան,  
Գինի տուր ինձ, այս կյանքի մեջ ոչինչ չկա անսասան:

Ես ծառա եմ այն քաջ մարդուն, որ կապանքը երկրային,<sup>86</sup>  
Արձակել է ինքն իր ձեռքով ու փշրել է այդ շղթան:

Երեկ, երբ ես գինետանը արբած էի, ուժաթափ,  
Հայտնվեց ինձ հրեշտակը և ինձ ասաց մեղմաձայն.

-Ո՞վ դու բազե բարձրագնա, կատարների դու արքա,<sup>87</sup>  
Տառապանքի այս խորշերում ու՞ր ես գտել ապաստան:

Ո՞վ միամիտ,- հնչեց դարձյալ պարիսպներից երկնային,<sup>88</sup>  
Չգիտե՞ս, որ այդտեղ կյանքը որոգայթ է իսկական:

Լսիր խոսքս, միտքդ պահիր ու փոխանցիր ամենքին,  
Այդ խոսքը ծեր մի իմաստուն ինձ պատգամեց մի անգամ:

Մի տրտնջա, որ աշխարհը քեզ ուզածդ չի տալիս,  
Քանզի դու չես որոշողը աշխարհի կան ու չկան:

Գոհացիր քո ունեցածով, դ'ա է կամքը բարձրյալի,  
Գիտցիր, և ի՞մ, և քո՛ առջե փակ է դուռը ընտրության:

Մի՛ պահանջիր, որ լնկերդ հավատարիմ մնա քեզ,  
Մեր հարսնացու է աշխարհը, փոփոխվում է միշտ փեսան:<sup>89</sup>

Վարդի ժպիտն անապական՝ անդավ սիրո նշան չէ,  
Տրտմի՛ր, բլբուլդ սիրահար, քանզի ժամն է տրտմության:

Ո՞վ անճարակ դու հանգաթուխ, մի նախանձիր Հաֆեզին,  
Մարդուն տրված ձիրքն ու փայլը Աստծու՛ շնորհն է միայն:



Վարդը՝ կրծքիս, գիճին՝ ձեռքիս ու սիրութիս՝ իմ կողքին,  
Տերն աշխարհի՝ մի ծառա է սոսկ այս պամիս իմ կողքին:

Մոմ մի վառեք այս մեջլիսում, քանզի այսօր, այս գիշեր,  
Լուսնակերես իմ սիրելին, լուս է տալիս իմ կողքին:

Գիճի խմենք, այս խնջույքում գիճին հալալ է, սակայն  
Հարամ է, երբ, որ վարդաբույր, դու չես գալիս իմ կողքին:

Թող անդադար տավիդ հնչի ու սրինգը գեղգեղա,  
Զէ՞ որ դու և գինու գավճ է պտույտ տալիս իմ կողքին:

Պետք չեն յուղերը հոտավետ, քանզի օծված մուշկերով  
Խոպոամերի բույրն է սիրում իմ սիրելիս իմ կողքին:

Ու մի՛ խոսեք դուք շաքարի քաղցրությունից անուշհամ,  
Երբ իր շաքար շուրթն է բացում իմ ցամկալիս իմ կողքին:

Խոսք մի բացեք վատ համբավից ու իմ բարքից անպատիվ,  
Փառքիս համար պարտական եմ իմ համբավիս՝ իմ կողքին:

Ծվայտ ենք մենք ու գինեմոլ, բայց թե ովքե՞ր են նրանք,  
Որ քաղաքում գոհ ու գոռող ման են գալիս իմ կողքին:

Հսկիշները օրենքների, որ մտքերի մեջ, թաքուն,  
Երազում են ինձ հետ նստել, գինեմոլիս, իմ կողքին:

Առանց գիճի ու սիրութի, Հաֆեզ, օ՛ր իսկ մի ապրիր,  
Վերջն է ծոմի ու գարունն է հորձանք տալիս իմ կողքին:



Ավետիք Խամակյանի փոխադրությունը.

Գիճին՝ ձեռքիս, վարդը՝ կրծքիս  
Անուշ սերս սրտովս.  
Չինմաշինի թագավորը  
Խեղճ աղքատ է աչքումը.  
Հիմիկուց դեն պիտի պաշտեմ  
Վարդն ու աղջիկն ու գիճին:

Ու ականջս միշտ կուզենա  
Լըսել երգեր սրտալի.  
Աշըս կուզե անթարթ նայել  
Անուշ դեմքիդ նազելի:  
Բույրը վարդի ու շուշանի  
Ուշք ու միտքըս կը տանի:

Ձէ՛, բույր պետք չէ, քու մազերիդ  
Մըփանքն ինձ բույրի ծով է.  
Ձէ՛, մեղը պետք չէ, քու շըրթունքիդ  
Ալշաքարը ինձ բավ է:  
Հիմիկուց դեն էլ չեմ ապրի  
Առանց կին ու գիճին:



Իմ երկնաճեմ նոճի յարս ինչու՞ դաշտում չի լինում,  
Վարդի՞ն՝ ընկեր ու հասմիկի՞ն՝ խորիրդատու չի լինում:

Երեկ գիշեր տրտնջացի խոպոպներից իր աճսիրտ,  
Ասաց՝ «Դև ի՞նչ, սանձել նրանց հոսքը հորդուն, չի լինում»:

Իսկ իմ սիրտը թեթևամիտ նրանց ցանցում խճճվել,  
Այդ խճճված ճամփից նրան ետ բերել տուն չի լինում:

Ինչքան էլ որ աղաջում եմ իր հոնքերի աղեղին,  
Խոնարհվի ու մի պահ լսի երգս տրտում, չի լինում:

Երբ քայլում ես, ինչպե՞ս է որ քո մշկաբույր փեշերից,  
Դաշտովը մեկ իրարանցում ու խլրտյուն չի լինում:

Երբ զեփյուտից խոպոպներիդ բույրն է չորս կողմ սփռվում,<sup>90</sup>  
Հանդարտ մնալ, չմոռանալ, խոսք ու խոստում չի լինում:

Սիրտս՝ սիրո խոռվքի մեջ՝ հոգուս էլ չի ծառայում,  
Քեզնից հեռու՝ ինքս ինձ հետ էլ հաշտություն չի լինում:

Քեզ պես հրաշք մատովակը գինու մրուր էլ թե տա,  
Տեսնեմ, այդ ո՞ր տղամարդն է, որ դադարգյուն չի լինում:

Մի թողնի լամ, թեն գիտեմ՝ լոկ անձրնի կաթիլից,  
Առանց արցունք՝ մարգարիտը ծովի խորքում չի լինում<sup>91</sup>:

Սպանվեց Հաֆեզն անհաղթելի քո նազանքից սեթներ,  
Կսպանվի՛ նա, ով սիրո դեմ խիստ ու արթուն չի լինում:



Իս յարի հետ բաժանման ժամն ու գիշերը վերջացավ,  
Աստղերի հետ ամենտացավ լուսաբերը, վերջացավ:<sup>92</sup>

Իր նազանքները սեթևեր, որ ձմեռն էր թելադրել,  
Գարնան քամին եկավ, ցրեց, որ ձմեռը վերջացավ:

Փառք տաճք աստծուն, վարդի բուփը փրկվեց, չեղավ ցրտահար,  
Ինքնահավան ձմուն քամու բերած բեռը վերջացավ:

Լուսը բացվեց, պատուեց մութը գաղտնիքների քողարկված,  
Ասաց «դուրս եկ», քանզի չքվեց սև ստվերը, վերջացավ:

Գիշերների տված ցավը խրվեց, մնաց սրտիս մեջ,  
Գեղեցկութու շուքի մերքը բեկվեց սերը, վերջացավ:

Հեմ հավատում, թե վերջացավ ժամանակը դավադիր  
Ու չթողած սրտիս վրա իր հետքերը, վերջացավ:

Ով մատովակ, շնորհ արա, լցորու գավս մինչ պոռմկ,  
Ի՞նչ էլ ասեք, գիմին բուժեց իս վերքերը, վերջացավ:

Թեպետն խոսքը Հաֆեզի լսող չկա, բայց կասեմ՝  
Տառապանքս - թող օրինված լինի տերը - վերջացավ:



Հուսադեմին բլբովն հովին իր գանգատը բարբառեց,  
Թե՛ իմացա՞ր, Վարդի սերը իմ սրտի հնտ ի՞նչ արեց:

Նրա դեմքի ալվարդ գույնը սիրտս լցրեց ալ արյամբ,  
Վարդաթուփի իր փշերին ինձ խեղճ գերի դարձրեց:

Ես ստրուկն եմ ու դուրբանը թովչանքին այն նազելու,  
Որ անսքող, առանց անի իր գանձերը ինձ բերեց:

Օտարների վատությունից բողոք չունեմ, քանի որ  
Ամենից վատ հարվածները ինձ ընկերը հասցրեց:

Ինչ հուսացի արքաներից, ողջը խարկանք դուրս եկավ,  
Սիրելիին հավատացի, նա՛ ել հավատս ցրեց:

Թող օրինվի ցայգալուսի զեփյուռն, որ իր շոյանքով  
Սիրուց անքուն հոգիներին անդորրություն նվիրեց:

Բացեց փակված թերթիկները վարդակոկոն սիրուիռս,  
Կապայի փեշը ետ տարավ ու լույսով ինձ կուրացրեց:

Մինչ բլբովը կարոտակեզ անհոյս իր սերն է ողբում,  
Առոտվան հովը սեթներ սիրո գործն իր կատարեց:

Աչքդ լույս, ո'վ գինեվաճառ, գինեգործներ, ցնծացե՛ք,  
Հաֆեզն ելի գինի խմեց, կեղծ բարքերից հրաժարեց...



Գործս՝ հանձնած բախտանիվին, իր ավարտին չի հասնում,<sup>93</sup>  
Սիրտս արնել է վերքերից, դեղ դարմանը չի հասնում:

Ծամփի քամու ձեռքն եմ ընկել, փոշիանում եմ անզոր,  
Մինչև պատիվս չեմ զոհում, ձեռքս հացին չի հասնում:

Մինչև որ խեղճ ատամներս հազար հարված չստանա,  
Ուկրոտ մահ մի կտոր իսկ իմ շուրթերին չի հասնում:

Կուշտ եմ կյանքից, սակայն, ասեք, ես, անճարս ի՞նչ անեմ,  
Որ մահ տալու աղերսանքս երկնավորին չի հասնում:

Ծակատագրի բռնությունից հուսահուտներն ո՞նց մեռնեն,  
Երբ իրենց ձեռքը ուժահատ մարվան օղին չի հասնում:

Մինչև հազար տատասկ ու փուշ չի բուսնում դառն այս հողին,  
Վարդաստանի մեջ բացվելու հերթը՝ վարդին չի հասնում:

Տգետների փայլն ու փառքը մինչև աստղերն են հասել,  
Գիտունների հառաջանքը աստծու դատին չի հասնում:

Բոնված եմ սիրուդ տեմչով իմ սրտի ողջ էությամբ,  
Ախ, ափսոս որ իմ տեմչանքը քո քար սրտին չի հասնում:

Հակոբոսի զույգ աշքերը սպիտակեցին կարոտից,  
Եգիպտոսից և ոչ մի լուր իր կարոտին չի հասնում:<sup>94</sup>



Ո՞վ դու գեփյուռ, երբ որ հասնես Արաքս գետի ափերին,  
Համբուրիր այն հովտի հողը, ուր ճեմում է իմ փերին:

Եթեն տեսնես գեղեցկունուս, ինձնից հազար բարև տար,  
Ու ականջ դիր ոլոտապանին ու քարվանի զանգերին:

Դու համբուրիր պատգարակը, ուր իմ սիրունն է բազմած,  
Հայտնիր Արան, որ բաժանման ցավից այլվում եմ կրկին:

Ես, որ խոնարին լսում էի քարոզները բարեպաշտ,  
Որպես պարգև՝ բաժանումի վերքն ստացավ իմ հոգին:

Արդ, քեֆ արա, սեր վայելիր, վանիր ահը քո սրտից,  
Հսկիչ այրերն էլ մտքի մեջ հասակիր են մեր վարքին:

Սիրտդ համձնիր գինու գավին, հոգիդ՝ սևաթ աշքերն,  
Թող այդ այրերը մշտարթուն չհամձնվեն ոչ մեկին:

Սիրելն, ավաղ, կատակ բան չէ, ո՞վ սիրտ, հիշիր մշտապես,  
Սերը սեր չէ, եթեն միայն ապավինես դու կրքին:

Շաքարեղեգնը թութակին հյութ է տալիս քաղցրահամ,  
Խսկ ոտն ու թնն իր մեջ սուզում ու խեղդում է ճանճիկին:

Թե իմ յարը գեթ մի անգամ Հաֆեզ՝ անունս ասի,  
Այդ շնորհը հերիք է ինձ, որ հասնեմ իմ տենչանքին:<sup>95</sup>



Թե ընկեր ես, միշտ տերը քո տված խոսքին դու եղիր,  
Թե խցում, թե վարդաստանում նրա կողքին դու եղիր:

Խելառ քամուն մի վատահիր գալարները խոպոպիդ,  
Ոչ թե տանջող, այլ դարմանող նրա վերքին դու եղիր:

Սիրախաղի անուշ լեզուն ամեն հավքի բանը չէ,  
Արի, երգիչ, տաղասացը իր հմայքի դու եղիր:

Աստծու սիրուն, ազատիր մեզ ստրկության կապաճքից,  
Մեր սուլթանը, տիրակալը մեր այս կյանքի դու եղիր:

Մոմի նման դու հավասար լուսդ բաշխիր ամենքին,  
Դաշնակողը մեր այս անդաշն վարքությարքի դու եղիր:

Դու խեզրի հետ ընկերացիր, Ալեքսանդրին մի' լսիր,  
Թաքուն տերը անմահության սուրբ ակունքի դու եղիր:<sup>96</sup>

Աչքերի խաղն է սիրունու, որ գերում է բոլորին,  
Հմայվողը հազարախաղ այդ հրաշքի դու եղիր:

Հարամ որսի վրա երբեք սուր մի քաշիր անզգուշ,  
Մի վարանիր, վայելողը քո իսկ փառքի դու եղիր:

Լոիր, Հաֆեզ, և մի ողբա դաժանությունը յարիդ,  
Քեզ ո՞վ ասաց գերյալը այդ զմայլանքի դու եղիր:



Երբ սիրով եմ բոցավառվում ես սիրուն եմ, ինչպես մոմ,  
Մթնում մոլոր անտունների առջևում եմ, ինչպես մոմ:

Օր ու գիշեր քուն չի գալիս իմ վշտակեզ աշքերին,  
Քեզնից բաժան՝ օր ու գիշեր արտասպում եմ, ինչպես մոմ:

Համբերանքիս թելը կտրեց վշտի մկրատը անգութ,  
Քո անթեղած կրակներից ես այրվում եմ, ինչպես մոմ:

Ո՞վ կիմանար իմ գաղտնիքը, եթե արցունք չթափեր  
Չբոցկւտար, սեր չառկայծեր իմ արցունքը, ինչպես մոմ:

Սրտիս պատրույգը բարակել, հյուծվել է քեզ տենչալուց,  
Մեր բաժանման մորմոքներից հալիլում եմ, ինչպես մոմ:

Թե մինչև լույս ինձ փարվանան լուր չքերի հաշտության,  
Հրի կտամ ես աշխարհի հիմն ու այունը, ինչպես մոմ:

Առանց քո լույս գեղեցկության օրս գիշեր է դառնում,  
Ախ, քո տված տաք ու պաղից նվազում եմ, ինչպես մոմ:

Համբերության լեռս փափկեց քո կարոտից անդադրում,  
Սիրուդ հրի ու շրի մեջ մարմրում եմ, ինչպես մոմ:

Մինչ լուսաբաց մի պահ մնաց հրաշք դեմքիդ նայելու,  
Ցույց տուր դեմքդ, թե չէ արդեն սպառվում եմ, ինչպես մոմ:

Ո՞վ նազելիս, ինձ պարգևիր նորից սիրո մի գիշեր,  
Որ քո լույսը լուսավորի սիրտ ու տունս, ինչպես մոմ:

Հաֆեզ, ավաղ, վառ ես պահում սիրո հուրը մշտակեզ,  
Ո՞նց հանգսնես աշքի ցողով, երբ այրվում ես ինչպես մոմ:



Եթէ օտար այս տեղերից ես մի օր տուն կգնամ,  
Ես առավել փորձով հարուստ և իմաստուն կգնամ:<sup>97</sup>

Այս ճամփերից թէն ողջ-առողջ նորից հասնեմ հայրենիք,  
Երդվում եմ, որ հասնելուս պես՝ ես գինետուն կգնամ:

Ու կպատմեմ ի՞նչ հայտնություն արի ես իմ ճամփերին,  
Մենախուց անգամ գինով ու զվարթուն կգնամ:

Սիրո ճամփի ծանոթներն ինձ սառնությամբ էլ ընդունեն,  
Չկարծեք թէն կելնեմ նորից, օտարություն կգնամ:

Թէն ձեռքս ընկնի իմ պաշտելու խոպոպների պերճ շղթան,  
Այդ շղթան ինձ ուր էլ քաշի՝ Բեզ ու մկուն կգնամ:

Երբ տեսնեմ իր կեռ հոնքերը-աղոթատան զույգ կամար,  
Ես ծնկաչոք, որպես նրանց երկրպագուն կգնամ:

Երջանիկ եմ ես, Հա՛ֆեզ, Ավիրյալս Վեզիրի,  
Որ այս կյանքից՝ կյանքս տված կին ու գինում՝ կգնամ:



Լուսաբացին իշա պարտեզ, որ վարդ քաղեմ նորաբաց,  
Երբ ականջիս տակ գեղգեղաց սոխակի երգը համկարծ:

Դժբախտ հավքը ճիշտ ինձ նման վարդի սիրուց էր այրված,  
Ու ողբում էր դաշտովը մեկ՝ վարդի տեսչով բռնված:

Ծրջում էի այնուինետև ամբողջ օրը դաշտերում,  
Սիրող վարդի ու բլրուկի վերք ու ցալով համակված:

Բլրուկն վարդին էր սիրահար, իսկ վարդը յարն էր փշի,  
Ու երեքն էլ տառապում են ու չեն հասնում միմյանց:

Սոխակի երգը այդ պահին ալեկոծնց իմ հոգին,  
Ես դարձա լուռ ու մտախոր, կորավ հանգիստս անդարձ:

Պարտեզմերում անհամար են բացվող վարդերը՝ սակայն,  
Առանց փշի տված ցալի, դեռ ոչ մի վարդ չի պոկված:

Հաֆեզ, կյանքի բախտանիվից բարի մի բան մի հուսա,  
Բարությունից շատ ավելի կյանքը ակունք է շարյաց:



Ահավասիկ Ավետիք Խաճակյանի փոխադրությունը.

Լուսադեմին վարդ քաղելու  
Խշա սիրուն իմ ալգին  
Եվ լսեցի խեղճ սոխակի  
Երգը տրտում, վշտագին:

Ա, նա, նա էլ ինձ պես խեղագար՝  
Վառված վարդի ջերմ սիրով՝  
Ողջ ծաղկոցը կանաչավառ  
Լցրել է լաց ու կոծով:

Վարդը կախարդ մի հյուրի է,  
Պես սիրութին սոխակի,  
Նրա սիրտը չի մեղքանա  
Սոխակինն էլ չի սառի:



Կարոտ աչքս, համբերանքս ավազմերին կնետեմ,  
Այլվող սիրտս արցունքներիս այսակմերին կնետեմ,

Նեղված հոգուս հառաջանքը կհասցնեմ մինչ երկինք,  
Մեղքն Աղամի ու Եվայի՝ կրակմերին կնետեմ:

Աղբյուրը մեր ուրախության այնտեղ է, ուր սերն է մեր,  
Կերթամ իր մոտ, սիրտս ճրա կանգնած տեղին կնետեմ:

Քանդիր հանգույցը կապայիդ, ո՞վ լուսնյակդ լուսափյուռ,  
Հյուսքերիդ պես՝ իմ գլուխը քո ոտքերին կնետեմ:

Խոցված եմ ես ճակատագրից, գիճի տուր ինձ, որ հարրեմ,  
Աստղաբույլը կհանգուցեմ, երկինքմերին կնետեմ:

Մի կում գիճի այս իմ գավից կտամ բախտին դյուրափոխ,  
Տավղի նվագը զրնգուն երկնի գամին կնետեմ:

Հաֆեզ, խառն է ժամանակը, վաղվա օրը՝ անորոշ,  
Վաղը ինձ ի՞նչ, ես այսօ՞րս հանույքմերին կնետեմ:



Թուրք ֆալաքը մեզ թալանեց, կերուխումը վերջացավ,  
Լուսնի մահիկն էլ բոլորնց ու գավի ձև ստացավ<sup>98</sup>:

Ընդունելի է այն մարդու ծոմն ու հաջի դառնալը,  
Որի համար՝ ուխտատեղի, սիրո պանդոկը դարձավ:

Նմաններիս համար տեղը խուզ անկյունն է պանդոկի,  
Օրինվի նա, որի միտքը պանդոկ հիմնել հղացավ:

Հակինք գիճուն դիմակայող՝ սթափ խելքն է մշտապես,  
Նա է շահում, ում կյանքում այդ առևտուրը կայացավ:

Նա, որ սրտի արյունով է լվացումը կատարում,  
Քո հոնքերի կամարի տակ նա աղոթել կամեցավ:

Ինչ փույթ, թե շեյխը մշտարթուն խոժոռ աչքով մեզ նայեց,  
Ու մեր հանդեպ իր տևական քամարտանքը խորացավ:

Երախտապարտ եղիր յարիդ՝ իր լուս դեմքը նայելիս,  
Քանզի նրան նայելով է, որ քո աչքը լիացավ:

Սիրո խոսքը դու Հաֆ եզից լսիր, ոչ թե քարոզչից,  
Թնև խոսքի ճարտարությամբ նա բոլորից էլ անցավ:



Սիրողների էլ չեմ տեսնում, շողն ու սերը ի՞նչ եղան,  
Ընկերության վերջը եկա՞վ, ընկերները ի՞նչ եղան:

Կենաց ջրերը ցամքեցի՞ն, կորա՞վ լուսի մարգարեմ<sup>99</sup>,  
Վարդի սրտից արյուն կաթեց, գաղճան ամպերն ի՞նչ եղան:

Ոչ ոք, ավա՞ն, չի հարցնում ճիշտն ու սուտը ընկերոջ,  
Ծշմարտախոսն ի՞նչ օրն ընկավ, ազնիվ բարքերն ի՞նչ եղան:

Մարդկայնության հանքից վաղուց սաթ ու սուտակ չի եղում,  
Զերմն արևի, ցողն անձրևի, բամու ջանքերն ի՞նչ եղան:

Այս աշխարհը հանգրվան էր սիրո, բարու, գթության,  
Գութի վախճանը ե՞րբ եկավ, արդար կարգերն ի՞նչ եղան:

Վեհանձնության մրցարշավը դադարել է գործելուց,  
Արշավասույր հեծյալների փայլն ու փառքերն ի՞նչ եղան:<sup>100</sup>

Հարյուր հազար վարդ է բացվել, բայց հավքի ձայն չլսվեց,  
Բլբուլներին ի՞նչ պատահեց, սոխակները ի՞նչ եղան:

Արուայակը չի նվագում, ճոխ լեզվա՞կն է չորացել,<sup>101</sup>  
Ու՞ր է հաճույքն արբեցումի, մատովակներն ի՞նչ եղան:

Լոի՞ր, Հաֆեզ, գաղտնիքն աստծո դեռ հայտնի չէ ոչ մեկին,  
Ու՞մ հարցնես, բարի բախտի ժամանակներն ի՞նչ եղան:

Ա-ս Հայան



## Բարք Թահիեր\*



Դու երկնքի գաղտնիքներին դեռ հասու չես, շա՞տ ափսոս,  
Դու չես անցել կյանքի ճամփան ամենատես, շա՞տ ափսոս.  
Դու, որ ապրել ու չես ջոկում լավն ու վատը աշխարհում,  
Քո իսկական բարեկամին ո՞նց ճանաչես, շա՞տ ափսոս:



Աչքս ու սիրտս մեղքի մեջ են գցում ինձ,  
Աչքս տեսնում, սիրտս տանջվում է թախծից,  
Մի սուր սարքեմ, խրեն անկուշտ աչքիս մեջ,  
Սիրտս փրկվի նրա նայած - տեսածից:



Նորից մթմեց, որ իմ հոգին այրվի,  
Նորից հիշի կարոտ ու կին, այրվի, : .  
Վախենում եմ սիրո համար սիրունի  
Սուրբ հավատս բեկվի կրկին, այրվի:

\* Սուֆիզմի դրակոնումները պարսից պոեզիայի ժամրային համակարգում առավել ակնհայտ դարձմելու, Ս. Կապուտիկյանի կողմից կատարված միստիկ բանաստեղծների թարգմանություններն ամբողջացնելու նպատակով, ժողովածու են մտել նաև քաղաքացի՝ «Մարգարտաշար»-ից:



ԲԵՐՔ

Սիրտս վերք է, սիրտս վերք է, սիրտս՝ վերք,  
Բժիշկ բերեք, Բերիմ, ճար արեք,  
Բժիշկն եկավ, դարման արավ ստիպված,  
Երք որ տեսավ, թէ ինչպես եմ սրտաբեկ:



Ծամփան մութ էր, քարոտ, ու ես է՛ արբած,  
Հանկարծ գավս ձեռքից սահնեց, ընկավ ցած,  
Չկոտրվեց՝ աստծո աշքն էր վրան,  
Ինչքա՞ն գավեր կոտրվում եմ՝ դեռ չընկած:



Մի շինական ելել, հնձում էր դաշտը,  
Լացող աշքով, բայցև հնձում էր դաշտը.  
Ե՛վ հնձում էր, և մըմնջում «Ա՞յս, ափսո՞ս»,  
Որ կակաշից ամայացնում էր դաշտը:



Ես այն ունեմ եմ, որին դերվիշ են ասում,  
Չունեմ տաճիք ու ապաստան, պատ ու պյուն.  
Լուսանում է՝ պտտվում եմ քո տաճ շուրջ,  
Գիշերները գիշերում եմ ավազում:



Կառնեմ գավս ու վարդերով հմայվելու կգնամ,  
Զուլալ ջրով ու կանաչով հագենալու կգնամ,  
Երկու - երեք գավ կիսեմ ու կհարբեմ ջրափին,  
Վայրի - կակաչ սիրուններին սիրտս տալու կգնամ:



Ո՞վ արարիչ, առանց քեզ թող ծաղիկն իսկ չծաղկի,  
Թե ծաղկի է, թող մնա, առանց գույն ու բուրմունքի:  
Եթև մեկը՝ առանց քեզ՝ խնդա անհոգ, անիմաստ,  
Թող իր սրտի արյունով ներկվի կարմիրն իր դեմքի:



Ծուրթի՝ շաքար ու մարմինդ՝ զուտ արծաթից է ձոլված,  
Թե գաս գիրկս, խմացիր, որ սիրտս բոց է, աչքս՝ թաց.  
Վախենում եմ իմ բոցերից հաղվի արծաթը մարմնիդ,  
Հաղվի շաքարը շուրթերիդ՝ արցունքներից իմ անսանձ:



Ա՞յս, առանց քեզ բարձը օձ է իմ աչքին,  
Օրը՝ գիշեր, խինդը խոց է իմ աչքին.  
Թե առանց քեզ պարտեզ ելնեմ շրջելո՛՝  
Վարդանոցը փշանոց է իմ աչքին:



Ադամորդուն երեք դարոդ կա աճընդիատ.  
Ղարիբության, գերության ու յարի դարդ:  
Հեշտ է տանել ղարիբություն, գերություն,  
Յարի դարդն է, որ դժվար է, ծա՛նը է շատ:



Իմ աշքերը քո կայանն է, քո տունը,  
Աշքիս շուրջը քո ճամփան է, քո հունը.  
Վախենում եմ ոտքդ դնես անգգույշ,  
Թարթիչներս ոտքդ ծակեն, սիրունս:



ԱՌԱ, իԱՃ Բամար քո քար սիրտը չի այրվում,  
Ի՞՞նչ զարմանամ, կարծր քարը չի այրվում,  
Բոնկվում եմ, որ հոգիդ էլ բռնկեմ,  
Խոնավ փայտը, որ հոգիդ է, չի՝ այրվում:



Ես որ գինուց ու սիրուց եմ արքեցել,  
Էլ ինչո՞ւ եմ քեզնից մեռու մնացել.  
Ես, որ երբեք չեմ տաքացել քո հրից,  
Էլ ինչո՞ւ եմ ցավի ծխից կուրացել:



Սարի գլխին լուռ նստեցի քանի՛ ժամ,  
Որ կակաչը բացվի, քաղեմ, լիանամ:  
Այն շբացվեց, չզգաց տենչը իմ սրտի,  
Այս, կակաչն էլ անհավատ է քեզ նման:



Այս, սիրելիս, առանց քեզ հուսահատ եմ ու մկուն,  
Աչքս փշով ծածկվել, հող է լցվել իմ աչքում.  
Այն ձեռքերը երշանիկ, որ քեզ էին փաթաթված,  
Հիմա անճար ճանճի պես զարկվում են ապակուն:



Ալ կակաչը կանաչ սարին սոսկ մի շաբաթ է մնում,  
Մանուակը քարաժայոին սոսկ մի շաբաթ է մնում.  
Երկրից երկիր ճամփա ղմկա՝ ճաշակեցի ամեն բան,  
Գեղեցկուին հավատարիմ սոսկ մի շաբաթ է մնում:

Դու հեռու ես, ու սրտիս՝ լայն աշխարհում տեղ չկա,  
Մարմնիս, հոգուս ցավերին ուրիշ ճար ու դեղ չկա,  
Երդվում եմ քո անունով՝ թե երկրում, թե երկնքում  
Քեզանից զատ ուրիշ տեսչ, ուրիշ թուվք ու գեղ չկա:



Եթե մի օր ձայնս հասմեր առ Աստված,<sup>102</sup>  
Կասեի՝ տե՛ր, քեզ եմ հղում սոսկ մի հարց,  
Ինչո՞ւ մեկին տվել ես բյուր բարիքմեր,  
Իսկ մյուսին՝ արյամբ հունցած գարեհաց:



Վագր ու առյուծ ասես լինես, սիրտ, ա՛յ սիրտ,  
Ինձ հետ անվերջ կովի մեջ ես, սիրտ, ա՛յ սիրտ.  
Զեռքս ընկնեիր, կթափեի արյունη,  
Որ տեսմեի, թե ի՞նչ գովն ունես, սիրտ, ա՛յ սիրտ:



Թե որ սիրտը սիրութի է, հապա ո՞րն է սիրութին,  
Թե սիրութին սիրտ է, հապա էլ ինչ անոն տաճք սրտին.  
Սիրտ - սիրութի խառնվել են, ձուլվել հոգուս խորքերում,  
Սիրտս ո՞րն է, սերս՝ ո՞րը, ինչպես պարզեմ վերատին:



Վայ այն օրվան, երբ ինձ շիրիմ կդնեն,  
Գլխիս վրա Բող ու մոխիր կցանեն.  
Ոչ ոտք կլնի, որ փախուստ տամ օձերից,  
Ոչ ձեռք կլնի, որ մրջյունին փախցնեմ:



Արի՛, սոխակ, մեկտեղ լացենք մեր սերը,  
Դու ինձնից առ ցավոտ սիրո դասերը,  
Կորած վարդիդ դու լոկ Բինգ օր ես ողբում,  
Ես իմ յարին՝ տարվա օրն ու գիշերը:



Սիրահարը էլ մահից չի վախենում,  
Դատից, բանտից ու աթից չի վախենում.  
Սիրահարը սոված գայլի է նման՝  
Հովհանների հարայից չի վախենում:



Գարուն եկավ, սար ու ձորեր կանաչ հանդերձ են հագնում,  
Ամեն գարուն մարդու կյանքից մի գարուն էլ է տանում.  
Երբ գեղութիք դաշտ են ելնում ժողվելու վարդ ու շուշան,  
Զարելների շիրիմներին վառ կակաչներ են բուսնում:



Զուգ հյուսքերդ զույգ լարերն են ոռքաքիս<sup>103</sup>,  
Ի՞նչ ես տանջում հալից ընկած խարարիս.  
Թե սեր չունես, էլ ինչո՞ւ ես հայտնվում  
Կեսգիշերիս երազներում ու ճամփիս:



Մի պահ արի՛, հա՛լս նայիր, աշագեղ,  
Գեր մի գիշեր ինձ կյանք տայիր, աշագեղ.  
Գլխիդ վարդ եւ խփել, ո՞վ իմ բողբոջ վարդ,  
Ես ձեռքերս եմ գլխիս խփում վարդի տեղ:



Գանգատ ունեմ իմ սրտից, որ բախտիս դուռն է փակում,  
Գանգատ ունեմ իմ սրտից, որ ինձ տանջում է անքուն.  
Գանգատ ունեմ իմ սրտից, որ մի վայրի թռչնի պես  
Անվերջ՝ դեռ կուտ չկերած՝ հայտնվում է վանդակում:



ԱԴԱ, առանց քեզ սի՞րտս հրդեհ է իմ մեջ,  
Էլ ուրիշ գործ չունի, այրվում է անշեջ.  
Երբ գնացիր, ես մանկան պես անխոհեմ  
Զեռքս գլխիս զարկում, ողբում եմ անվերջ:

Զալալ առ Դին  
Ուսումն





Երբ գիշերը երազիս մեջ երևում ես մինչև լույս,  
Ցերեկն էլ ես անվերջ ինձ հետ, թեև անհաս ու անհոյս.  
Փիղը, երբ որ երազի մեջ իր Հնդկաստանն է տեսնում,  
Առավոտյան առավել է տենչում փակից ելնել դուրս:



Գիշերն անցավ, բայց չգիտեմ ես գիշեր է, թե ցերեկ,  
Իմ գիշերս ցերեկ դարձավ նրա դեմքից լուսատեսք.  
Ո՞վ գիշերներ, դուք գիշեր եք, զի չգիտեք դուք նրան,  
Ո՞վ ցերեկներ, նրա լուսից դո՞ւք էլ լուս տալ սովորեք:



Զուլալ է իմ սերը, ինչպես զուլալ ջուր,  
Իմ սերը ինձ դարձրեց բարձր ու մաքուր.  
Թե գցում է սերն ուղիշին դունեղուն,  
Ես ու սերս մեր սիրելո՞վ ենք ամուր:



Քեն ու ճախանձ քո սրտիցը դուրս վանիր.  
Գեշ մտքերո, գեշ բնույթը այպանիր.  
Թե վատ գործ ես բռնել՝ իսկույն կասեցրու,  
Լավ համբավդ ավելացրո՞ւ, պահպանի՞ր:



Ես ասացի՝ ա՛ջս. ասաց՝ Ամու-Դարյա կդարձնեմ.  
Ես ասացի՝ սի՛րտս. ասաց՝ արյուն-արցունք կհոսեցնեմ.  
Ես ասացի՝ իսկ մարմի՞նս. ասաց՝ երկու-երեք օրում  
Խաղք - խայտառակ կանեմ ու քեզ աքսորի դուռ կհասցնեմ:



Ասա՛, քամի, դու ի՞նչ տեսար քո ճամփին.  
Վառված-տարված մի սիրտ տեսա՞ր քո ճամփին.  
Սիրտ, որ հրով ժեռ քարեր է հալեցնում,  
Ածուս կտրած գրանիտ տեսա՞ր քո ճամփին:



Իմ սիրութին ամենքի մեջ հույժ բաքուն է, իմացի՛ր.  
Մ'ի կես խոսքից ինձ հասկացող, խիստ գիտուն է, իմացի՛ր.  
Կրծքիս վրա իշած լուսին, լույսի պյուն է, իմացի՛ր,  
Հոգու նման՝ իմ խորքերում, իմ մարմնումն է, իմացի՛ր:



Երեկ տեսա իմ հոգյակին սիրատուն,  
Ամենքի մեջ նստել, ասում՝ էր, խոսում.  
Տենչս զսպած՝ դեմքս դեմքին մոտեցրի՛  
Իբր' նրա խոսք ու զրույցն եմ լսում:



ଶ୍ରୀମଦ୍ଭଗବତ





Ընկած սիրո ետևից՝ ես անդադրում տարվեցի,  
Բախտի խաղը ի՞նչ է որ, կյանքի՝ խաղում տարվեցի.  
Ում կարծեցի ես ընկեր՝ վերջում դարձավ թշնամի,  
Այդ ի՞նչ բախտ էր իմ բախտը՝ միշտ աշխարհում տարվեցի:



Քամի՛, շրջիր աշխարհով մեկ ու սիրուս ասքը ասա,  
Հարյուր լեզվով սիրոս գաղտնի տենչն ու տանջանքը ասա.  
Այնպե՛ս ասա, որ քո խոսքից ուրախները չտիրեն,  
Ցավից բացի՝ դեղ ու ճարն էլ, բախտն ու բերկրանքը ասա:



Բացի քեզնից՝ աչքիս ոչ մի ուրիշ սիրուն չի գալիս.  
Քո թաղից զատ՝ աչքիս ուրիշ ճամփա ու տուն չի գալիս.  
Քո պատկերով քուն եմ մտնում՝ գուցե տեսնեմ երազիս,  
Այս, առանց քեզ, ի՞մ նազելի, աչքերիս քուն չի գալիս:



Ուրախաբեր այն հին գավը ձե՛ռքս տուր,  
Ու գավի մեջ գինու լավը ձե՛ռքս տուր,  
Գինին, որ պաղ պղպջում է, խենթացնում,  
Հանգնում է սիրո ցավը, ձե՛ռքս տուր:



Սեր խոստացավ ու ինձ սիրո գինին որպես խաղ տվեց,  
Երբ արբեցի՝ տառապանքի գավն ու ախուվախ տվեց,  
Զույգ աչքերս արցունքով լի ու սիրտս լի կրակով՝  
Նրա ճամփի փոշին դարձա, քամին տարավ, շաղ տվեց:



Հարստությունն՝ ինչքան էլ շատ, չարժեն մեր այս զրկանքին,  
Ոչ մի հաճուք չարժեն մեր այս կրած անբավ տանջանքին.  
Յոթը հազար տարվա խինդն ու ուրախությունն աշխարհի  
Չարժեն մեր յոր օրվա քաշած հեծությանը դառնագին:

Առ խնդաբեր գինու սափորն ու արի',  
Փախի՛ր մարդու դավից ստոր ու արի',  
Ականջ մի՛ դիր ասողներին «մի գնա»,  
Լսիր միայն սրտին ին խոր ու արի':



Ամաչում է կոյս կոկոնը առաջինը քեզանից,  
Ծփոթված է ճուրը նարդիզը, այդ անգինը, քեզանից.  
Վարդը զուր է չափվում քեզ հետ, նրա ուժն ի՞նչ է քո դեմ.  
Երբ լուսնից է իր լուսն առնում, իսկ լուսինը՝ քեզանից:



Ծակատագրի խաղերը միշտ անսահման են, անհատակ,  
Այդ խաղերից դողում ենք մենք և աշխարհը բովանդակ,  
Ասում են, թե սեր ուրիշ Աերկ չի առնում երբեւ,  
Հապա ինչպե՞ս սև մազերս դարձան այսպես սպիտակ:



Եթե դու ել հանկարծ սիրո թակարդն ընկնես ինձ նման,  
Հերիք է դա, որ դու գիմու զորը լինես ինձ նման.  
Ու թե ինձ հետ՝ սիրո խենթիս՝ սեղան նստես գեթ մի օր,  
Հերիք է, որ անբարոյի անուն հանես ինձ նման:



Այս գիշեր քո սիրո ցավից արյան մեջ եմ քննելու.  
Հեռու սեր ու առագաստից՝ խուլ ու խեղճ եմ քննելու.  
Չե՞ս հավատում, մոտս դրկիր քո ստվերը - քո հոգին,  
Որ տեսնի, թե քեզնից հեռու ես ինչպես եմ քննելու:



Ամեն մի օր սիրուդ ցավը մի նոր բեռ է ինձ դրկում,  
Աչքերիս մեջ մի նոր փուշ է դեմս աշխարհը փակում.  
Ես տնքում եմ, իսկ իմ բախտը Բիշեցնում է ինձ անվերջ՝  
«Քո սիրուց զատ ես շա՞տ ուրիշ հոգսեր ունեմ այս կյանքում»:

•Ωωμή





Թե չխախտես մարդու գոյի բալիսմանը մեծազոր,  
Ծշմարտության վարագույրը դու չես բացի քո ուժով.  
Ծշմարտությունը մի ծով է, իսկ խոսքն ու երգը՝ միրած.  
Ո՞չ ոք ծովի իր ծարավը չի հագեցրել միրածով:



Իմ սիրութին մեկն է, դիմացը սակայն,  
Հարյուր հազար հայելի կա զանազան.  
Նրա դեմքը լուրաքանչյուր հայելի,  
Ցույց է տալիս՝ ի՞ր մաքրության համաձայն:



Երբ առանց քեզ գավը տարա շուրթերիս,  
Հաճույքից չեր, որ պարապեցի, սիրելիս.  
Սև աշքերդ իմ օրը սև դարձրին.  
Օրս մթնեց ու վերջ չեղավ գիշերիս:



Ամեն վայրկյան Զեգելի գովքն եմ ասում,  
Սիրտը կոտրած մարդու վերքով եմ ասում.  
Որ աշխարհը գաղտնիքներս չիմանա,  
Գաղտնիքներս թուղթ ու երգով եմ ասում:

*Հ. Բ. Բ.*

Ով որ քո շուրթը տեսավ, քեզ հրակեզ անվանեց,  
Ով որ քո լույս դեմքը տեսավ՝ արեգմատես անվանեց.  
Գեղեցկության քո կերպերը անհամար են, անհաշիվ,  
Քո կերպերից ով ինչ տեսավ, քեզ հենց այդպէ՞ս անվանեց:<sup>104</sup>



Անեռության աշխարհից գոյության կողմը ընկա.  
Օտարական մի անցորդ՝ այս կյանքի հողմը ընկա.  
Ասին, Զամի, ի՞նչ կուզես այս կողմերում, ասացի՝  
Անեռություն... ուր իսպառ գոյության հետքը չկա:



Վա՛յ նրան, ում սերը լքի ու գնա,  
Որի ալգուց մոճին թեքվի ու գնա.  
Ասում ես թե՝ թույլ տուր գնամ, բայց ինչպես  
Կյանքը թույլ տա՝ հոգին պոկվի ու գնա:



Քո շողարձակ դեմքին կողքին լուսինները ոչինչ են,  
Հյուսքիդ կողքին՝ Սալսաբիլի լուս ջրերը ոչինչ են.<sup>105</sup>  
Քեզ որ տեսա՛ աչքս դարձավ հազար տեղով տեսնող աչք.  
Հազար տեղն էլ քեզ եմ տեսնում, մյուսները ոչի՞նչ են:<sup>106</sup>



- 1 Vahid Dastgerdi, Namee Khagani be Nezami "Armaghan" 5, 1-9. ըստ՝ Бертельс Е.Э., Избранные труды, Низами и Фузули, М., 1962, £ջ 83:
- 2 Е.Э. Бертельс, Избранные труды, Навои и Джами, М., 1965, £ջ 102: Ալիշեր Նավոյին Զամիի աշակերտն էր, որի ստեղծագործությունը գտնվում է ուղբեկական գրականության ակունքներում: Նա գրում էր և՝ պարսկերեն և՝ «թորքի» լեզվով (ժամանակակից 12):
- 3Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. ներած. և ծանոթագր. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940, £ջ 248: Միջնադարում «փիլիսոփիայելու» ձևերից էին ողբի և բողոքի ժանրը, պարսից պոետիայում՝ սեփական վիճակի նկարագրությունը (դասիդեյք Հալիիե):  
20-րդ դարի էքփիստենցիալիստ Կ. Յասպերսը նմանօրինակ Հոգեկան վիճակը, որում առավելապես գիտակցում են պատմության էությունը և ի վիճակի են արտացոլել տվյալ դարաշրջանի ճնշաժամային պահերը, անվանում է «գոյարանական պարզաբանում» (existenzialerhellung), երևովթ, որ ոչ այնքան գոյարանության ճանաչողությանն է ուղղված, որքան նրա բողոքարկմանը: Հմմտ. Е. В. Мареева, С. Н. Мареев, Экзистенциализм XX века в религиозной и атеистической форме, в сб. Философия XX века, М. 2001, £ջ 372: Յասպերսը մասնավորապես գրում է. «Ճշմարիտը չի սավառնում ամենայնից անկախ, արստրակցիայի ոլորտներում, ինքն իր համար, ինքն իր վրա հենվելով: Փիլիսոփիայական միտքը և նրա մտածողին մենք պետք է որոնենք իրենց կենդանի իրականության մեջ»: Տե՛ս նույն տեղում:
- 4 Zarrinkub Abd al Husein, Pelle pelle ta molaghate khoda, Tehran, 1375.

- 5** Բացի վերոնշյալ իմաստից, սուֆիզմ կամ թասավոփ եղրույթ-ների ծագումը կապվում է նաև՝ սաֆա (մաքուր), սաֆ (շարք) և այլ քիչ հավանական հասկացությունների հետ:
- 6** Շարիաթ՝ մահմեդական իրավական օրենքների համալիր:
- 7** Շարիաթ - թարիղաթ - հաղիղաթ.
- 8** Դրանցից էին հոգևոր ուսուցիչ - աշակերտ (մորեդ- մորչեդ) «բինոմը», սուֆիզմի ծիսական բազմաթիվ ձևերը, ինչպես նաև եղբայրությունների ինստիտուտը:
- 9** Բարա Թահեր Օրիանը (պրակ. բարա՝ Հայր, օրիան՝ մերկ) պարսից քնարերգու բանաստեղծ է, վաղ սուֆիական պոեղի-այի ներկայացուցիչ: Նա ծնվել է 10-րդ դ. վերջին Համադա-նում: Մննյան և մահվան թվականներն անհայտ են: Նրա կյանքից մեզ հասած տեղեկությունները առավելապես ավանդազրուցային են, որ պահպանվել են ժողովրդի հիշողու-թյան մեջ: Ըստ այդ առյուրների՝ Բարա Թահերը թափառա-կան դարվիչի կյանք է վարել, կրել է Բարա պատվավոր անու-նը, որ ժողովրդի մեջ նրա վայելած հեղինակության ապացու-ցն է: Ըստ ավանդության՝ եղել է սուրբ այր, լողացել է սառցա-ջրում, մերկ ոտքերով քայլել սառուցի վրա՝ բողոքելով, որ այրվում է: Հաճախ առանձնացել է Ալվանդ (Օրոնտ) սարի քա-րայրում, կամ էլ սարալանջին, միատիկական հոգեվարժանք-ների համար: Նրա կենսագրությունից հավաստի այն, որ Բա-րա Թահերը հանդիպել է Թյուրք սուլթան, բարեպաշտ և հա-վատավոր Թողրուլ Քելի հետ (1038-1063):

Թահերը գրել է քառյակներ, որոնք կոչվում են ոչ թե ոռրա-յի, այլ դորեյթի (երկու բելթ): Դա պարսից գրական քառյակից տարրերվում է բանաստեղծական չափի նուրբ շեղումով, որ միայն վարպետ և գիտակ ականջը կարող է տարրերել: Թահե-րի քառյակների պարզ, անպաճույժ, ժողովրդական ոգին այդ պոեզիան մերձեցնում են բանահյուսությանը: Դրան նպաս-տում է նաև Թահերի պոեզիայի բարրառը, որ կոչվում է հա-մադանի կամ լորի: Գրական ժառանգությունից մեզ են հասել միատիկական դատողություններ, մի քանի ոչ բարձրարվեստ

դազալ և մոտ 300 դորեյթի: Բարա Թահերի տեքստաբանորեն Հավաստի Դիվանը Հրատարակվել է Հայտնի գրականագետ Վահեղ Դասթպյարդիի կողմից 1926 թ. Թեհրանում: *Divan-e Baba Taher, (Zamime-e sale haftom-e majale-e Armanag), chapter-khane-e Ferdousi.*

<sup>10</sup> Զալալ աղ Դին Մուհամադ Ռումին ծնվել է Բայլսում (Աֆղանստան) 1207թ.: Նա սերում է մահմեդական աստվածաբանության Հայտնի գիտակի ընտանիքից: Երկար տարիներ Մերձավոր և Միջին արևելքում հոր Հետ շրջագայելուց Հետո Հաստատվել է սելջուկների մայրաքաղաք Իկոնիայում (Ռում, այստեղից էլ նրա Ռումի գրական կեղծանունը), որը մշակութային և կրոնական կյանքի կենտրոն էր: Փայլուն կրթություն է ստացել և՝ Հումանիտար, և՝ բնական գիտությունների բնագավառում: Հոր մահից Հետո՝ 24 տարեկան Հասակում, փոխարինել է նրան տեղի Հայտնի մաղրասեեռում և անմիջապես ընդունելություն գտել Հեղինակավոր կրոնական գործիչների կողմից՝ ստանալով սուֆի շեյխի տիտղոս: Նրա կյանքում ճակատագրական է եղել Հանդիպումը թափառական սուֆի շեյխ Շամս-է Թաբրիզիի հետ (Թավրիզի արև), որի նկատմամբ սերը պաշտամունքի բնույթը է կրել: Ռումին նշանավոր է իր «Մասնավի»-ով, որ պոեմի ժանրի անվանումն է (աա, բբ, գգ, դդ Հանգավորումով:): Այն մեծ կտավի ստեղծագործություն է՝ գրված սրամիտ առակների ձևով, նուրբ հումորով, բարոյալրատական հենքով: Թելաղրված է Ռումիի և գրառված՝ նրա աշակերտների կողմից:

Ռումին սուֆիզմի մեծագույն ջատագով է: Նա իր ստեղծագործ կյանքն ուղեկցել է միստիկական Հոգեոր պրակտիկ գործունեությամբ: Երկերում ցուցաբերել է կրոնական գիտելիքների, բանահյուսական աղբյուրների և սյուժեների խոր իմացություն: Նրա քնարական ստեղծագործությունների Դիվանը կոչվում է «Դիվան-է Քյարիր» (Մեծ ժողովածու), կամ, ի հիշատակ իր Հոգեոր ուսուցչի, «Դիվան-է Շամս»: Այն ընդգրկում է Հազարավոր կրոնափիլիսոփայական բնույթի դազալներ և քայլակներ: Շատ ղեազերում առաջին Հայացքից չի ընկալվում դրանց մետափիզիկական հենքը, և վերջիններս ընդունվում են որպես սիրային բանաստեղծություններ: Գրել է նաև

«Ֆի մաֆի» (Կա-չկա) կոչվող արձակ սուֆիական մանրապատումները: Նրանից մեզ է հասել նաև Նամականին (Մոքաթերե): Ռումին հաճախ իր դազալների վերջին բեյթը ավարտել է «Առություն» կեղծանունով, իսկ կյանքի վերջին շրջանում՝ իր Հոգմոր ուսուցչի՝ Շամս-է Թարրիզիի անունով: Հայտնի է, որ վերջինիս սպանել են Ռումիի աշակերտները՝ Ռումիի հետ Հոգեպես առնչվելու մենաչնորհը Շամսից խելու համար:

Ռումիի թաղման օրը նրա պատգարակի ետևից գնացել են և՝ սուֆիները, և՝ քրիստոնյա միատիկները, և այլ հավատքների կրողներ:

Օգտագործել ենք՝ *Jalal-ad-Din Rumi, Divan-e kamel-e Shams-e Tabrasi (mashhour be Molavi), Badu oz Zaman Fruzanfar, Tehran, 1371. Mathnawi-e -Manawi, Moylana Jalal-ad Din Mohammad Balkhi-e Rumi, based on Reinold A. Nicholson, Leiden, Ed. by Dr. Kazem Dezfulian, 1378. Gozide-ye Ghazaliyat-e Shams, Dr. Mohammad Reza Shafii Kadkani, Tehran, 1363.*

- <sup>11</sup> Շամս աղ Դին Մուհամադ Հաֆեզը 14-րդ դ. պարսից քնարերգու է: Նրա մասին տեղեկություններն առավելապես ժողովրդական են: Մնվել է Շիրազում (Խնայլարաբար՝ 1325թ.) այնտեղ ապրել ողջ կյանքը: Ստացել է լավ կրթություն, տիրապետել արաբերենին, անգիր իմացել Ղուրանը: Մոտ է եղել շահական պալատին, ներքող-դասիդեներ նվիրել նրանց, ովքեր Հովանավորել են իրեն: Դրանցից են թյուրքական ծագում ունեցող Շահ Շոշան, իրանցի Խնջուն և այլք: Ունի երկու մասնավի, ինչպես նաև բանաստեղծական փոքր ձևեր՝ դաթե և ոռքայթ: Սակայն Հաֆեզի քնարական Դիվանի հիմնական մասը նրա դազալներն են, որոնք համարվում են դազալի ժանրի զարգացման գագաթնակետ: Հաֆեզի պոեզիան մեծ արձագանք է գտել Ելրոպայում: Նրա դազալների ազդեցությունը ձևավորել է Գյոթեի Արևմտա-արևմելյան Դիվանի գաղափարը:

Օգտագործել ենք՝ *Divane Khadje Hafez-e Shirazi, be ehtemam-e Seid Aby al Ghasem Andjavi Shirazi, Chap-e dovom, Tehran, 1346. Divan-e Hafez-e Shirazi, Mohammad Kazvini, d-r Ghasem Ghani, 1374: Տեքստում հնարավոր է բեյթերի տեղափոխություն:*

<sup>12</sup> Նուր աղ Դին Արդ ար Ռահման Ջամին 15-րդ դ. պարսից բանաստեղծ է: Նրա նախնիները Խորասանի Ջամ գավառից էին: Այդ տեղանունից է գալիս նրանց կեղծանունը (նիսրա): Մնշել է 1414 թ. և չուտով, ծնողների հետ տեղափոխել Հերաթ (Աֆղանստան): Սովորել է Հերաթի և Սամարղանդի հոգևոր դպրոցներում: Նրա կյանքը համընկել է լուսավոր այրերից մեկի՝ Ռուզուգրեկի իշխանության հետ:

Ջամին եղել է Հարգարժան շեյխ, «Նաղշերանդիկ» սուֆիական եղբայրության անդամ: Հայտնի է նրա բարեկամությունը շահի վեղիր, մտավորական և բանաստեղծ Ալիշեր Նավոյիի հետ: Ջամին դարի հանրագիտակներից էր: Ունի բազմաթիվ աստվածարանական և սուֆիական բնույթի մեկնություններ, աշխատություններ միատիցիզմի, տրամարանության, պոետիկայի, ճարտասանության, երաժշտության, քերականության վերաբերյալ: Տիրապետել է արաբերենին: Հայտնի է իր «Յոթամատյան» կոչվող պոեմներով, ինչպես նաև Դիվանում պահպանված դասիդեներով, դազալներով, քառակներով և քնարական այլ ձևերով: Գրել է նաև արձակի ժանրով:

Գյոթեի մեկնարանմամբ Ջամին էպիգոնն է, որը տաղանդավոր կերպով ներառում, նորոգում և ծավալում էր նախորդների ձևոքերումները, ինչպես նաև ընդունում սիսալանքը: Ջամինի բանաստեղծության բազմաբարդ պատկերների համակարգը նախադուռն է քիչ անց պարսից պոեզիայում ձևավորվող փորուն հնդկական ոճի, որը Եվրոպայում նմանեցնում են բարոկկոյի հետ:

Հայտնի է, որ առնչվել է քրիստոնյա միստիկների հետ: Մացել է 1492 թ., Հերաթում:

<sup>13</sup> Dr. S. Zia-ad-Din Sadjadi, Mokhadame-e bar mabani-e erfan va tasavof, Tehran, 1372, էջ 303:

<sup>14</sup> Բեյթը բանաստեղծական երկտողն է:

<sup>15</sup> Հետաքրիդ է, որ Հայոց մեջ թոնդրակյանների գաղափարներում առկա էին պանթեիստական հայացքներ: Սմբատ Ջարեհավանցու աշակերտ Կյուրեղլը պնդում էր, որ «Աստված ամեն ինչի մեջ է, նա առկա է ամենուր և ամեն մի բանում»: Տե՛ս U.U.

Արևածագան, Հայ մշակույթը 9-11-րդ դդ. (կիլիսովայություն), Հայ ժողովրդի պատմություն, Ե., Հ.3, 1976, էջ 333:

- 16 Հմմտ. Դավիթ Անհաղթ, Երկեր, Փիլիսովայության սահմանումները. Թարգմ., առաջ և ծանոթ. Ս.Ս.Արևածագանի, Երևան, 1980, էջ 73:
- 17 Այդ երևոյթը տարբեր ձևեր է ստանում. այն արտահայտվում է ուշաթափությամբ, ցնցումներով, տեսիլքով ևն (trance):
- 18 Առաջինը էքստազի պահին հայտարարել է՝ Ես Աստված եմ (Ան ալ հաղ), իսկ երկրորդը՝ Փառք ինձ, փառք ինձ, Մեծ եմ Ես (Սորհանի, սորհանի, մա ազմ շանի):
- 19 Ունդ եղրը տարբեր իմաստներ ունի. ստահակ, խորամանկ, նենդ: Ունդի ինատիտուտը միջնադարյան սուֆիզմի պատմության ուշագրավ երևոյթներից մեկն է: Նրանք սուֆիզմի ոչ սովորական հետևորդներից էին, ունեին իրենց ընկալումը այդ ամենի նկատմամբ՝ ընդգծված արհամարհանք կեղծ բարեպաշտության և ավելորդ ծիսականության հանդեպ: Ունդը պարսից պոեզիայում խորհրդանշում է ազատ, անկախ, թափառական, անօրեն անհատ, գինետան ամենօրյա հաճախորդ:
- 20 *مو أن رنتم كه نامم بى قلندر  
نه خوان ديرم نه مان ديرم نه لانگر*  
Sb'u Divan-e Baba Taher. նշվ. աշխ.:  
Բնագրում՝ Ես այն ունդն եմ, որին դալանդար են անվանում....:  
Դալանդար եղրութը մեծ տարածում է գտել արարական «1001 գիշերներից» հետո: Պատմականորեն «դալանդարը» դարվիշների բազմաթիվ տեսակներ է ներառում, որոնք ազատ ու անկարգ էին իրենց վարքագծում և չէին ենթարկվում սուֆիական ծեսերին: Այդ անունով կոչվել են ոչ միայն անհատ միստիկներ, այլ նաև եղբայրություններ: Հմմտ և այդ մասին տե՛ս Ջ. Տրիմինգեմ, Ըփիյական օրդենները և աստվածությունները, Հայաստան, Երևան, 1989; էջ 276-77:
- 21 Հմմտ. Մ.Տ. Степанянц, Философские аспекты суфизма, Մ, 1987, էջ 35:

م بدم پخته شم سوخته.

22 *Sb'u Jalal-ad Din Rumi, Divane kamel, նշվ. աշխ.: Ի դեպ այս հանրահայտ աֆորիզմը Ա. Շիմելի հրաշալի աշխատության ուսումնական տողացի թարգմանության մեջ երանգափոխվել է, որից կորել է սուֆիի հոգևոր զարգացման ուղին նշող հիմնական երրորդությունը (իսակ լինել, հասուն դառնալ և այրվելով՝ մոխրանալ): Sb'u Աննեմարի Շիմմել, Մир исламского мистицизма., Մ., 1999, էջ 252:*

23 *Sb'u Ղուրան, 24:35: Այստեղ և հետագ.՝ Կորան, թարգմանությունը և համապատասխան բառարական բանաստեղծական ձև է, սովորաբար 5-12 բայթի սահմաններում: Այն միահանգ է (աա, բա, գա, դա, եա ևն): Կարծիքներ կան, որ դազալն անջատվել է դասիդեներողի առաջին՝ քնարական մասից, որ կոչվում է նասիր կամ թաղաղոլ: Սկզբնական շրջանում այն միայն սիրային և կնոջ գեղեցկության նկարագիր է ներառել, իսկ հետագայում՝ հարստացել ներրողային, փիլիսոփայական, սուֆիական և սոցիալ-հասարակական բնույթի բազմաթիվ թեմաներով: Ղազալը 13-րդ դարում կանոնարկված էր, ուներ որոշակի օրենքներ, որոնցից էին՝ նրբաճաշակ և հետաքրքրաշարժ մուտքը (մաթլա), և ներքին միասնականություն ապահովող ելքը (մաղթա): Վերջինում պարտադիր էր հեղինակի կեղծանունը:*

25 П.П.Блонский, Философия Плотина, М., 1918, стр. 52.

26 *Մենք մեր «Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան 10-16 դդ.» (Երևան, 1997), մենագրության մեջ նարեկացու «Անհասանելի» Աստծո երևույթը վերագրել ենք ընդհանրապես քրիստոնեական միստիցիզմին, որ ճիշտ չէ: Իրականում քրիստոնեական միստիկը նույնպես ապրում է էքստազի պահը: Քրիստոնեական միստիցիզմի առանձնահատկությունների մասին տես՝ Էվելին Անդրշոլլ, Միտիցիզմ, София, 2002:*

27 *Այս պատկերը սուֆի բանաստեղծ Սանայից է փոխառված: Sb'u Աննեմարի Շիմմել, նշվ. աշխ., էջ 247:*

28 Հմմտ. Աննեմարի Շիմմել, նշվ. աշխ., էջ 94:

29 *ՏԵ՛Ս Ալ Ջուլաբի ալ Խաջվիր, Կյաշ ալ Մահճյուբ*, перс. текст указ. и предисл. В. А. Жуковского, Раскрытие скрытого за завесой, Л., 1926, էջ 542 («Ետպադ՝ Կյաշ ալ Մահճյուբ»): *ՏԵ՛Ս նաև* В. А. Дроздов, О проблеме изучения суфийской терминологии, в сб. Неизменность и новизна художественного мира, М., 1999, էջ 86, 89: *ՏԵ՛Ս նաև* Ա. Կ. Կողմոյան, Միջնադարյան արևելքի եղայրությունների սիմպարանության խնդրի շուրջ. Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատոր XX, Երևան, 2001, էջ 290-300:

30 К. Юнг. К пониманию психологии архетипа младенца в сб. Самосознание европейской культуры XX века, М., 1991. («Հումանիզմ՝ пер. и прим. С. С. Аверинцева, էջ 128»).

31 Հմմտ. Սիլյամ Չիտտիկ. В поисках скрытого смысла, Суфийский путь любви, М. 1995, էջ 225:

32 Նույիսկ Պլատոնը դեմ էր ինքնասպանությանը. Դավիթ Անհաղթի մեկնությամբ փիլիսոփան խորհում է մահվան մասին ոչ այնպես, որ անջատի հոգին երկրորդայնից, այսինքն՝ մարմնից, որովհետև մարմինը, որպես ապականելի, կոչվում է երկրորդայն՝ հոգու համեմատությամբ: Պլատոնն ասում է. «Մենք կարծես թե մի պահարանում ենք գտնվում, և պետք չէ որ մարդը դուրս գա այնտեղից և փախչի»: Հմմտ՝ Դավիթ Անհաղթ, նշվ. աշխ. էջ 74:

33 Հմմտ. Անդերխոլլ, նշվ. աշխ., էջ 130:

34 مرده بدم زنده شدم گرمه بدم خنده شدم.  
... گیوان کبیر...  
կամ՝ Gozide-e Ghazaliyat-e Shams, նշվ. աշխ., № 210.

35 *Tobe, Vara, Zohd, Fagr, Sabr, Tavakol, Raza*, որ համապատասխանում է. Ժողովություն (կամ՝ դարձ դեպի հավատք) բարեպաշտություն (կամ՝ աստվածավախություն), ասկետիզմ, աղ-

րատություն, Համբերություն, ապավինում, նպատակահանգում: Sh'u Dr. Zia-ad-Din Sadjadi, նշվ. աշխ., էջ 20:

<sup>36</sup> Յոթ Հանդրվան (Համբթ վաղի). տես՝ Attar Farid-ad Din, Manteg at Tair, be ehtemam Said Sadeq Goharin, chap-e chharom, Tehran, 1365:

<sup>37</sup> هفت شهر عشق را عطر گشت  
ما هنوز اندرون خم یک کوچه ایم

Sh'u Dehkhoda Ali Akbar, Amsal va hekyam, 4, Tehran, 1339.

<sup>38</sup> Հմմտ. Е.Э. Бертельс, Суфизм и суфийская литература, М., 1965, էջ 30.

<sup>39</sup> Дж. Тримингем, նշվ. աշխ., ծանոթագրություններ՝ О. Ф Акимушкин, Суфийские братства: сложный узел проблем, էջ 246:

<sup>40</sup> Հաղիս՝ 'արար': օրինակ, պատմություններ Մուհամադի գործունեության մասին, իր քարոզների տարրեր Հատվածներին տրված մեկնարանությունները, որոնք ուղեցույց էին դառնում Հասարակական կյանքում և կարգավորում էին Հոգևոր պաշտամունքն ու պետական կրոնը:

<sup>41</sup> И. П. Петрушевский, Ислам в Иране, М., 1966, էջ 316:

<sup>42</sup> E.Heron Allen, The lament of Baba Tahir, Being the rubaiyat of Baba Tahir Hamadani (Urian), London, 1902.

<sup>43</sup> Sh'u Ալոն Խաջիկեան, Աշխատութիւններ, Երևան, Հ. Ա., 1995, էջ 212-26:

<sup>44</sup> Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1960, էջ 27:

<sup>45</sup> Հմմտ. Дж. Арберри, Суфизм, Мистики ислама, М. 2002, էջ 196:

<sup>46</sup> Мухаммад Икбал, "Таинства личности" и суфизм, в кн. М. Т.

Степанянц, Философские аспекты суфизма, М., 1987, § 180  
(перевод Н. Пригариной).

- 47 D-r Zarrinkub Abd al Hosein, Az kuche-e rendan, Tehran, 1375, § 31:
- 48 D-r Zarrinkub Abd al Hosein, Nagsh bar ab, Se ghazal-e Hafez, Tehran, 1374, § 480-81:
- 49 Հիվանդ բանաստեղծությունների ժողովածուն է:
- 50 ՏԵ՛ս И.С. Брагинский, 12 миниатюр, М., 1976, § 254:
- 51 Այդ խնդրում նմանապես տարակարծություն կա: Արևմտյան որոշ տեսաբաններ համարում են, որ Հաֆեզյան դազալը բացառիկ միասնական է: *Sbu*՝ История персидской и таджикской литературы, под. ред. Яна Рипка, М., 1970, § 262-264: Հափեզի դազալի վերլուծության փորձը տես՝ Н. И. Пригарина, Хафиз и влияние суфизма на формирование языка персидской поэзии, в сб. Суфизм в контексте мусульманской культуры. М., 1989, § 95:
- 52 «Պրովանյան տրուգադուրը երգում է իր սիրեցյալին, սակայն չի գտնում և Հավանաբար չի էլ փնտրում Հատուկ և չտեսնված խոսքեր՝ իր զգացմունքներն արտահայտելու կամ նրա գեղեցկության նկարագրության համար: Հասկացությունների համակարգը և իր օգտագործած տերմինարանությունը դա դուտ ավատատիրական, իրավական տերմինարանություն է՝ «ծառայություն», «նվիրատվություն», «վասալական երդում», «սենյոր» ևն»: *Sbu*՝ А. Я. Гуревич, Категория средневековой культуры, М., 1972, § 28:
- 53 Թափսիրը Ղուրանի մեկնություններն են, որոնք տասնյակ Հատորներ են կազմում:
- 54 ՏԵ՛ս Կյաշ ալ Մահճյու, նշվ. աշխ., § 3:
- 55 ՏԵ՛ս О. Ф Акимушкин, Институт "Ханагах" и бином "мурид-

"муршид" в становлении организационных форм тасаввуфа, в сб. Ислам и проблемы межцивилизационных взаимоотношений, М., 1994, № 15-16:

<sup>56</sup> Հմմտ. Մ.Ի. Զանդ, Шесть веков славы, М., 1964, № 200:

<sup>57</sup> Առաջին դազալի վերլուծությունը տես՝ D-r Zarrinkub Abd al Hosein, Nagsh bar ab, № 9: Անջավի Շիրազին հիշատակում է դր Ղազվինիի կարծիքը, որը չի ընդունում այդ դազալի առաջին տողի հետ կապված հայտնի տեսակետը: Տե՛ս Divan-e Hafez, Andjavi, նշվ. աշխ., № 3:

Այդ մասին տե՛ս նաև Աշուու Մինասյան, Հաֆեզ, Թեհրան, 1995, № 256: Աշխատության մեջ բարեխղճորեն օգտագործված են բաղմաթիվ պարսից ակզրնաղբյուրներ: Տե՛ս նաև ծանոթ. 76:

<sup>58</sup> Ըստ այդ տեսության հիմնադիր Վիլյամ Ջեյմսի: Տես՝ В. Руднев, Словесность культуры XX в., (Ելեկ. տարբերակ): Հաֆեզի պոեզիան դիտել որպես գիտակցության հոսք (Поток сознания) մեզ առաջարկեց պրոֆ. Սուհամադ-Նուրի Օ. Օսմանովը, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը:

<sup>59</sup> Ուաղիփը բառը կամ բառերի շարքն է, որ կրկնվում է հանգից հետո:

<sup>60</sup> Հայրեններ, աշխ. Ա. Մնացականյանի, Երևան, 1995, № 359:

<sup>61</sup> Պատմութիւն Սերէսոսի, աշխատասիրությամբ Գ.Վ. Արգարյանի, Երևան, 1979, № 135, թարգմ. ըստ՝ Շ. Մալհասյանց, История епископа Себеоса, Ереван, 1939, գլ. 40:

Այդ ամենն, իհարկե, դարձել է քրիստոնեա-իսլամական րանավեճի խնդիր, քանի որ Ղուրանի մի քանի սուրաներում Սուհամադը «դրախտում» խոստանում է արբեցնող ըմպելիք (16:69, 76:21): Տես՝ Коран նշվ. աշխ.:

<sup>62</sup> Հմմտ. Низами Арузи Самарканди, Собрание редкостей или четырех беседы, М., 1963, № 59:

63 Հմմտ. Рашид ад Дин Ватват, Сады волшебства в тонкостях поэзии: пер. с перс. исслед. и комм. Н.Ю. Чалисовой, М., 1985, էջ 165, 199:

64 Հ. Ջեսթերթոնի այս Էսսեում չկա Արևելքի գյոթեյան գնահատանքը և լայնախոր ըմբռնումը: Г. К. Честертон, Омар Хайям и священное вино. сб. Самосознание европейской культуры, նշվ.աշխ., էջ 208-211: И.В. Гете, Западно-восточный диван, подгот. И.С. Брагинский, А. В. Михайлова., М., 1988.

65 Э. Фромм, Проблема. сб. Сумерки богов, М., 1990, էջ 145:

66 Рахим Мусульманкулов, Асрори сухан, Душанбе, 1980, էջ 7:

67 "Dar lugz -e sham va mad-e Hakim Unsuri". *Divane Manuchehri Damghani*, dr. Dabir Sayaghi, Tehran, 1347, էջ 70:

68 Քայուակի թարգմանիչն է Գ. Էմինը. տե՛ս «Մարդարտաշար», կազմեց, պարսկերենից տողացի թարգմանեց, առաջարանը գրեց և ծանոթագրեց Ա. Կողմոյանը, Երևան, 1990, էջ 54:

Այս քայուակը զետեղվել է Ռաշիդ ադ Դին Վաթեմաթի կողմից գրված՝ պոետիկայի դասագրքում, որպես Հուստորական հարցի նմուշ: Այս տարրերակով պոետիկայում այն կոչվում է «Թշաջոր» (զարմանք): Վերագրվում է այլ պոետի:

Տե՛ս՝ Ռաшид ад Дин Ватват, նշվ. աշխ., էջ 167:

69 Համո Սահյանը բնագրի ոչ բոլոր բեյթերն է թարգմանել, որ բացարձակապես չի խաթարում այս թարգմանության դասական արժեքը: Օրինակը քաղել ենք՝ Ա. Մինասյան, Սահյիի «Գոլեսթանը» և նրա հայերեն թարգմանությունները, Երևան, 1972, էջ 200:

70 Dovlatshah Samarkandi, Taskherat ash shoara, Leide, 1901, էջ 258:

Տե՛ս՝ А. Крымский, История Персии, ея литературы и дервишской теософии, М. 1914-1915, էջ 98:

- <sup>71</sup> Bar gozide-e Sherha-e Nima lyshidj, Tadvin-e Sirus Tahbaz, Tehran, 1376, էջ 137:
- <sup>72</sup> Միջնադարյան պարսից աշխարհի երկու հակաղիր ծայրամասերն են (Երաղէ Աջամ-Խորասան):
- <sup>73</sup> Լոռությունը (Ղամուչի) Ռումին հաճախ օգտագործել է ղազալի վերջին բեյթում, որպես բանաստեղծական կեղծանուն: Սակայն այն կրոնակիլիխոփայական հասկացություն է: Երբ վրա է հասնում էքստաղի պաշը, աղեապտի Հզոր կենտրոնացումը համակում է նրա ողջ էռությունը, անցնում մտքի առավել խորքային շերտերը և նա իրեն զգում է բացարձակ տիեզերական լոռության մեջ:
- Լոռությանը ամենօրյա, պրակտիկ և սովորական մեկնարանությունն է տալիս Ալ-Քուչայրին իր միատիկական երկասիրություններից (Ռեսալե) մեկում: Այն լոելու և լեզուն իրեն ենթարկելու հորդոր է: Sb'ս A Ճ. Արերրի, նշվ. աշխ., էջ 120:
- <sup>74</sup> Նկատի ունի աստվածաշնչա-դուրանյան Հովսեփի Գեղեցկին: Դուրանի 12-րդ սուլրան նվիրված է նրան և կոչվում է «Յուսեֆ»: Ըստ ավանդության՝ եղբայրները, նախանձից դրդված, Հովսեփին նետում են ջրհորը: Հորը՝ Հակոբին (Յաղութ) խարում են, թե Հովսեփին կերել են գաղանները: Հոր աչքերը ողբից կուրանում են: Անտեղյակ ճամփորդները դույլը իջեցնում են ջրհոր, Հովսեփին փրկում և մի քանի ստակով վաճառում: Հովսեփին ընկնում է եգիպտոս: Հետագայում նա դառնում է թագավոր, ներում իր եղբայրներին: Նրա շապիկի հպումից վերականգնվում է Հոր կարուտ աչքերի տեսողությունը:
- <sup>75</sup> Պոեմը կոչվում է «Մասնավի», որ ցույց է տալիս ժանրի երկտող հանգավորման ձևը՝ աա, բբ, գգ, դդ ևն: Թարգմանել ենք Հաստվածքար, ըստ Ա.Ստարիկովի կրճատման: Sb's 'Լիթերատура Իрана 10-15 в., Մ.-Լ., 1935, էջ 381:
- <sup>76</sup> Ամենաբարդ ղազալներից մեկն է: Հայտնի է, որ առաջին մեսրան (կիսատողը) մեջբերում է Յաղիդ Էրն Մուավիեից: Պարսիկ Շեղինակավոր գրականագետներից շատերը ընդդիմանում են այդ տեսակետին:

Երկրորդ կիսատողը բնագրում հնչում է. «Սերը սկզբից ինձ Հեղտ թվաց, սակայն Հետո դժվարացավ»: Դա դիտվում է որպես սուֆիի դասական վիճակ, երբ աղեպտը ընտրում է Աստծո ճանապարհը, սակայն Հետո են պարզվում դրա քարոզությունները:

Երկրորդ բեյթը մշկահոտ խոպոպի և այդ բույրից արյունու սրտերի նկարագիրն է: Պատկերը բազմաշերտ է և զուգորդական: Այդ մի բեյթի մեջ, բացի միստիկական խորհրդանիշ հանդիսացող խոպոպ, բույր, գույն և այլ եղրույթների, առկա է նաև թաքնված զուգորդություն ցավի և տանջանքի: Այն գալիս է մշկայցամի հիշատակումից: Նրա պորտի մոտ մի փոքրիկ պարկ կա, որի պարունակությունից մուշկ են ստանում: Մինչև ջխոցեն կենդանուն հենց կրծքի մոտ, չթափեն նրա արյունը, մուշկը չեն ստանա:

Զուգորդությունների ընթացքը բնագրում՝

Մշկաբույրն է տարածվում, երբ զեկյուուր ցրում է քո խոպաները (այնպես, ինչպես այծի պարկից մշկահոտն է տարածվում, երբ այն բաց են անում):

Քո մշկաբույր խոպոպի ամեն մի ոլորքից մարդկանց սրտերից արյուն է հոսում (այնպես, ինչպես մշկայցամի կրծքից, երբ կտրում են պարկը):

Այս պատկերում կա նաև արտատեքստային զուգորդություն. մուշկը խորհրդանշում է սև, իսկ արյունը՝ կարմիր գույն: Կարելի է ասել, որ զազալի կառույցը հիմնված է հակաթնեղերի վրա, որը սուֆիական բանաստեղծության առանձնահատկություններից մեկն է (մութլույս, կարմիր-սև, կյանք-մահ, անհոգ-ոչ անհոգ, գաղտնի-հայտնի, մոտ- հեռու ևն):

Սիրտ-խոպոպ համադրությունը ավելի քան ավանդական է: Ռուդաքին գրում է.

(Խոպոպիդ) ամեն ոլորքում հազար սիրտ կա բանտված,

(Խոպոպիդ) ամեն ծալքում հազար կյանք՝ հանգուցված:

*Sb'u Asar-e Aby Abdallah Rydaki, Estalinabad, 1957, էջ 125:*

<sup>77</sup> Քարավանի զանգը ժամանակի խորհրդանիշն է: Սաաղին Գոլեսթանի նախարանում գրում է.

Ամոթ այն մարդուն, որ գնաց և մի գործ չթողեց (իր ետկից),

Այն աշխարհի դանզը Հնչեց, բայց նա իր բեռը դեռևս չի կապել...

*Sh'u Kholiyat-e Saadi- Shirazi, ba moghadame-e Abas Egbal Ashtiani, Golestan, Sherkyat-e khetabfruoshi-e adab, Tehran, էջ 6:*

Սուֆիզմի տեսարան Ալ Ղաղալիի երկասիրության մեջ, որ նվիրված է միստիկի պրակտիկ և տեսական գործունեության ուսուցմանը, մի հատուկ կետ կա, որ կոչվում է «Մահվան մասին հիշելու անհրաժեշտությունը»: Ըստ՝ Ա. Ջ. Արերրի, նշվ. աշխ., էջ 133:

<sup>78</sup> Յուրաքանչյուր աղեպտ միայն իր ուսուցչի (փիր, մորշեղ, շեյխ) առաջնորդությամբ կարող է հասու դառնալ Հոգևոր ճանապարհի դժվարություններին և օրենքներին: Նրանց անձին պաշտամունքի հասնող տեղ էր տրվում: Այդ պարտականությունը իրենց վրա էին վերցնում տիտղոսավոր շեյխերը ու Հոգևոր -պրակտիկ գործունեությամբ հայտնի այրերը:

Իսլամի պատմությանը հայտնի է միայն լեզենդար Օվեյսը, որն իր ճանապարհն անցել է առանց Հոգևոր առաջնորդի: Բեյթի խմաստն է՝ հետևիր ուսուցչիդ և աստվածային սիրո գինով ողողիր քո աղոթագորզը:

<sup>79</sup> Ռոքնարադը գետ է, իսկ Մոսալլան՝ Շիրազի վարդաստաններից մեկը:

<sup>80</sup> Ղուրանի 12:23-30-ից է: Հովսեփի տիրոջ կինը (պոեղիայում՝ Զոլեյսա), որ անպատասխան սիրով սիրահարված էր Հովսեփին, վրեմինդրությունից դրդված՝ պատառոտում է նրա շապիկը և ամրաստանում:

<sup>81</sup> Այստեղ «այաթը» կարելի է թարգմանել նաև խորհրդանիշ, երկնային պատգամ, հրաշք:

<sup>82</sup> Հնարավոր է՝ Ղուրանի 76:21-ի արձագանքն է, ուր խոսվում է աստծու կողմից հավատավորներին շնորհվելիք դրախտային ընապելիքի (արար, շարար) մասին:

- 83** Մոհքասերը միջնադարյան Հակիչ ոստիկանների ինստիտուտի ներկայացուցիչ էր: Հաֆեղի ժամանակաշրջանում հատկապես հետամուտ էին գինի խմողներին:
- 84** Պատկերը հնարավոր է ձևավորվել է Ղուրանի 11:84 այաթից, ուր ասվում է քաղաքը զլսիվայր շրջելու և անհավատների գլխին քարեր տեղալու մասին:
- 85** Բնագրում՝ նրա մեջքը, որ Աստված ստեղծել է ոչնչից... Մեջքի բարակությունը գեղեցկության չափանիշներից մեկն էր:
- 86** Այս բեյթը վաղուց թևավոր խոսքի իրավունք է ստացել:
- 87** Բնագրում՝ «Հահրազ-է սեղբենելին». բազե, որ ամենարարձր ծառերի՝ մայրիների գագաթին է նստում և ամենատես է: Ղուրանյան պատկերացումներից է՝ 53:14-16. Մի գիշերային ճանապարհորդության ժամանակ Մուհամադը իրրև թե հասել է 8-րդ երկնքի վերջին սահմանին՝ լուսու բույսին, որը մերձակից է դրախտին:
- 88** Արտահայտում է բարձրության դուրանյան պատկերացումները: Ըստ Ղուրանի տիեզերաբանության՝ Աստված երկինքները ստեղծեց առանց հենման կետի, իսկ իր երկնային գահը տարածեց նրանց վրա 2:256, 13: 2 ևն:
- 89** Ե 'վ քրիստոնեական և' իսլամական միջնադարյան անտիֆեմինիզմի արտահայտություններից է, քամահրանք կանացի սկզբի նկատմամբ, որ ընդգծված է Ղուրանի բազմաթիվ այաթներում:
- 90** Բնագրում՝ «Մոլք-է Խոթան». Խոթանը չինական Թուրքեստանն էր՝ հայտնի բարձրորակ մուշկի արտահանմամբ:
- 91** Բնագրում՝ «Դորրէ Աղան», որ նշանակում է եմենի (Աղեն քաղաք) մարգարիտ: Ըստ մահմեդական պատկերացումների՝ մարգարիտը խեցիի մեջ գոյանում է գարնանային անձրսի առաջին կաթիլից:

- <sup>92</sup> Ժամանակի քաղաքական անցուղարձի այլարանությունն է:
- <sup>93</sup> Այս դադալը չի մտել դ-ր Ղազվինիի և Ղանիի կազմած ժողովածու: Անջավին գրում է. «Հնագույն ձեռագիրը դեռևս կատարյալ լինելու երաշխիք չէ»: *Sb' u Անջավի, նշվ. աշխ. էջ 96:*
- <sup>94</sup> *Sb' u ծանոթագրություն 74:*
- <sup>95</sup> Վերջին բեյթը մեկենասին նվիրված ներբող է, որի օրոք հին բարփերը և կարգերը վերականգնվում են:
- <sup>96</sup> Իսլամական ավանդության մեջ Խեղը (Եղիա) մի լուսասփյուռ մարգարե է, որ կենաց ջուրն է փնտրում: Ղուրանում նրա անունը չի հշատակվում: Ըստ ավանդորույցներից մեկի՝ Ալեքսանդր Մակեդոնացին Խեղի հետ անմահական ջրի որոնումներում տարվել է աշխարհիկ հաճույքներով և ետ մնացել ճամփից: Մեկ այլ տարրերակում Ալեքսանդրը ցանկացել է խմել կենաց ջրի ալբյուրից, սակայն ալբյուրն անհետացել է: Խեղը անապատում առաջնորդում է մոլորդալներին և տեղ է հասցնում քարավանից ետ մնացածներին: Նրա ուսնաւետքից կանաչ լուս է տարածվում: Այդ մասին տես՝ *Farhang-e Talmihat. D-r Cyrus Shamissa, Tehran, 1375, էջ 247-50:*
- <sup>97</sup> *Տերմինարանությունը սուֆիական է: Վերջին բեյթը ներբողային է:*
- <sup>98</sup> Համբեղը բաղմից ընդգծում է թուրքերի մեզ հայտնի առանձնահատկությունը: Այստեղ ճակատագիր -Փալաքը ունի ակնհայտ բացասական իմաստ: «Կերուխումը» ծոմի ավարտին ժողովրդի համար զցված առատության սեղանն էր: Ծոմից հետո գինու գավի ակնարկը հակադրություն և ընդգում է տիրող կարգերի դեմ:
- <sup>99</sup> *Sb' u ծանոթ. 96:*
- <sup>100</sup> Բնագրում՝ Վեհանձնության և կարեկցանքի գնդակը մեջտեղ են գցել,

Ոչ ոք հրապարակ չի գալիս, Հեծյալ (տղերքն) ինչ եղան:  
Պարսից միջնադարյան մանրանկարչությունից մեզ են հա-  
սել մականախաղի (Հոկեյ) մրցույթի պատկերներ, ուր Հեծյալ-  
ները մականով հարվածում են գնդակին: Այս դազալը բարի  
ժամանակների կարուտախտի վառ արտահայտութուն է:

<sup>101</sup> Ղուրանի թեմաների բեկումն է՝ 2:96-97: Արույակը (Ձոհրա),  
ըստ մահմեդական ավանդության, հրապուրել է հրեշտակներ  
Հարությն և Մարությն, իմացել կախարդական խոսքը և բար-  
ձրացել երկինք: Նա ուղեկցում է մոլորակների մի խումբ և հայ-  
տնի է «Երկնային երաժիշտ» անունով:

<sup>102</sup> Այստեղ ակնհայտ նմանություն կա Ֆրիկի «Բողոքի» հետ:

<sup>103</sup> Երաժշտական գործիք:

<sup>104</sup> Հայտնի սուֆիական բանաձևերից մեկն է. «Ամեն տեղ Դու ես,  
կամ, ամեն ինչ Դու ես»: Այս ազդարարման հետ կապված՝ մի  
սրամիտ անեկդոտ է պահպանվել: Մի անգամ, երբ շեյխ Զա-  
մին անցնում էր քաղաքի կենտրոնով և բոլորը խոնարհվում  
էին նրան ողջունելու համար, առաջ է վազում մի ջահել և սրա-  
մուում. «Երբ դու քեզ լրջապատող ամեն ինչին ասում ես՝ Դու  
ես, էլ տեսնելի՞ս էլ պիտի ասես «Դու ես»: Զամին արժանա-  
պատվորեն պատասխանում է. «Ոչ, ես կասեմ դո՛ւ ես»:

<sup>105</sup> Ղուրանում հիշատակված սուրբ գետի անունն է:

<sup>106</sup>Տե՛ս Ժանոթ. 104:

Նկատված Վրիպումներ

| Լ.դ | Տող   | Տպված է:      | Պնազ է լիճի   |
|-----|-------|---------------|---|
| 60  | 7     | Սիսիրամարը    | Սիրամարը  |
| 69  | 9     | Բուսաթուտմերմ | Բուսաթառմերմ  |
| 69  | 19-20 |               | Հաֆեզ, լոկո ո համբերիո, գիտցիր ոչ ոք աշխարհում,<br>Սուանց լայո ո այլվելու վիրացալին չի հասնում: |
| 70  | 11    | աչքերն        | աչքերին   |
| 72  | 7     | եքն արցունք   | եքն արյուն  |
| 81  | 10    | այրվի. յար    | այրվի.  |
| 82  | 2     | մերիմ         | մերիմ բներք   |
| 86  | 10    | մամուակը      | մամուշակը   |
| 106 | 1     | սասմ,         | սասմ,   |
| 106 | 5     | քո շուրջը     | քո հուրցը   |

ՊԱՐՍԻՑ ՊՈԵԶԻԱՅԻ  
ԸՆՏՐԱՆԻ

ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ  
ԹԱՐԴՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Պարսկերենից տողացի թարգմանեց,  
առաջարանը գրեց և ծանոթագրեց  
ԱՐՄԱՆՈՒՅ ԿՈԶՄՈԹԱՆԸ

ՄՈՒՂՆԻ ԲՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
Ձևավորումը՝ Վարդան Դալլաջյանի  
Տպագրված է ԳԱՍՊՐԻՆՑ տպագրատանը  
Երևան - 2004

۱۹۵

۶۲

